Տրամադրությունը մարտական է, բոլորիս փոխանցել է, որ ուժեղ է, չի կոտրվելու, իր համար պատիվ է հայրենիքի համար էս ամենով անցնելը: Շատ շատ մարդիկ են հարցնում նրանից՝ եւ ուսանողներ, եւ հասարակ քաղաքացիներ: Խաչիկ Գալստյանի կալանքը աբսուրդ է: Աչքովս տեսնեմ, չեմ հավատա, որ նա որեւէ հակաօրինական բան անի:

Կարդացեք՝ էջ 4

Այ քեզ հրաշք. Նիկոլ Փաշինյանին հաջողվում է հեծանիվ քշել, թմբուկ նվագել սովորել, հետևել սոցցանցի գրառումներին, լսել եւ խմբագրել գաղտնագրված աուդիո եւ վիդեո նյութեր, այցելել գյուղերի դպրոցներ, մեկնել գործուղումների, հրահանգավորել կուսակցականներին, պատարագակենտրոն քաղաքականության ժամանակացույց կազմել:

Կարդացեք՝ էջ 5

Չինաստանի քաղաքացի Սուն Յինգջուն Դուբայ-Երեւան ավիաչվերթով ժամանել է ՀՀ եւ իր անձնական գործածման համար, առանց իրացնելու նպատակի, ԱՄԷ-ից 0,34 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց են գտել իր ուղեբեռում, որի համար դատարանը նրան դատապարտել է 1.500.000 դրամ տուգանքի եւ 5 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 4 (4119), 23 հունվար, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Մեր տեղեկություններով՝ իշխանությունները Գարեգին Բ-ի դեմ նոր քրեական վարույթ են նախապատրաստում: Մեզ պատմեցին, որ Քննչական կոմիտեում մեղադրանք է քննվում՝ «փողերի լվացման» հոդվածով: Այդ վարույթի շրջանակներում հարցաքննվել է «Շողակաթ» հեռուստաընկերության տնօրեն Մանյա Ղազարյանը, որը եւս գործով անցնում է: Մենք դիմեցինք Գլխավոր դատախազություն՝ գրավոր հարցում պահանջեցին: Մինչ կստանանք մեր հարցման պատասխանը, փորձեցինք Մանյա Ղազարյանին հարցեր ուղղել՝ Ձեզ հրավիրե՞լ են քննչական մարմին, ի՞նչ գործի շրջանակում, ի՞նչ կարգավիճակով, եւ դա առնչվո՞ւմ է արդյոք Վեհափառին՝ նա որեւէ կարգավիճակ ունի՞ այդ գործով: Տիկին Ղազարյանից ստացանք կարճ պատասխան. «Այո, ես հրավիրվել եմ Քննչական կոմիտե՝ վկայի կարգավիճակում: Չեմ կարող մանրամասնություններ ներկայացնել հարցաքննության վերաբերյալ, քանի որ տեղյակ չեմ՝ դրա իրավունքն ունեմ, թե՝ ոչ: Միայն կարող եմ ասել, որ քրեական գործը «Շողակաթի» հետ որեւէ կապ չունի, բացահայտ անհիմն քրեական գործ է, եւ որեւէ լուրջ բան չեմ տեսնում»: Մեր տեղեկություններով, գործը վերաբերում է բնակարանին, որը Մայր Աթոռը հատկացրել է «Շողակաթի» երկարամյա տնօրենին՝ իր ֆոնդից: Հետագայում այդ բնակարանը սեփականատերը վաճառել է: Այդ գործարքն էլ Քննչական կոմիտեն որակում է որպես փողերի լվացում, որն իրականացրել է Ամենայն հայոց կաթողիկոսը:

Երկու օր առաջ գրել էինք, որ Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցության հիմնադիր համագումարի ժամանակ կհայտարարվի, որ վարչապետի թեկնածուն Նարեկ Կարապետյանն է՝ Սամվել Կարապետյանի եղբորորդին, որը «Մեր ձեւով» շարժման համակարգողն է: Սակայն թիմում բուռն քննարկումներ են գնում, թե ինչպես մատուցեն այդ լուրը. ոմանք համարում են, որ Նարեկ Կարապետյանը շատ երիտասարդ է այդ կարգավիճակի համար: Ըստ ամենայնի, կհայտարարեն, որ Նարեկը միայն դե յուրե է թեկնածուն, իսկ դե ֆակտո լինելու է Սամվել Կարապետյանը, որը ՀՀ օրենսդրությամբ իրավունք չունի ընդգրկվելու պատգամավորության ցուցակում եւ հավակնելու վարչապետի պաշտոնին, քանի որ օրենքի պահանջներին չի բավարարում: «Մեր ձեւով»-ում հասկանում են, որ շարժումը ստեղծվել է Սամվել Կարապետյանի անձի շուրջ, նա է, այսպես ասած, գլխավոր հերոսը, եւ հանրությունն ակնկալում է նրա անմիջական մասնակցությունը քաղաքական գործընթացներին, ինչը եթե այս փուլում անհնարին է, բայց իրենց ուժի հաղթանակից եւ օրենսդրական փոփոխություններից հետո կդառնա հնարավոր:

Հորթի հրճվանք

Ուրացումի, դավաճանությունների, մարդկային անհավատարմության ժամանակներում ենք ապրում: Անհայրենիք, անհիշողություն, անսկզբունք ժամանակներում: «Հրե՜ն, բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել...»,- 1978 թվին գրում էր Հրանտ Մաթեւոսյանը: Իսկ ինչ՞ կգրեր մեծ գրողը 2026 թվականին: Ընդամենը մի քանի տարի առաջ Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի, Արկադի Ղուկասյանի, Դավիթ Բաբայանի, մյուսների հետ աշխատած, հաց կիսած, ընկերություն արած մարդիկ հանգիստ հետեւում են Բաքվի անմարդկային դատավարությանն ու մեր հայրենակիցների խոշտանգումներին: Մենք, իհարկե, Վահագն Խաչատուրյանից ու Նիկոլ Փաշինյանից այլեւս ոչ մի ակնկալիք չունենք, եւ մեզ համար նորություն չէ նրանց պահվածքը, երբ Բաքվի բռնապետին տեսնելիս ոչ թե մեր գերիների հարցն են բարձրացնում եւ շուտափույթ ազատում պահանջում, այլ երախտագիտության նսեմ տեսարաններ բեմականացնում, նրա ձեռքը բռնած, նրա հայացքը որսալով՝ հալումաշ լինում: Բայց ինձ մեծ ցավ ու զարմանք պատճառեց Նուբար Աֆեյանի ներկայությունը Դավոսում, այն կադրերը, որտեղ նա ջերմ զրույցի է բռնված Նիկոլ Փաշինյանի հետ, երբ իր եղբայրը, իր երկարամյա գործընկերն ու բիզնես-պարտնյորը՝ Ռուբեն Վարդանյանը, Բաքվի բանտում են արդեն 3 տարի, իսկ ինքը տնտեսական ֆորումի է մասնակցում Շվեյցարիայում, «փոխգործակցության հնարավորություններ քննարկում» Նիկոլ Փաշինյանի հետ: Վստահ եմ՝ եթե նրանք տեղերով փոխվեին՝ Ռուբեն Վարդանյանը լիներ ազատության մեջ, իսկ Նուբար Աֆեյանը՝ Բաքվում, Վարդանյանը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցները կգործադրեր՝ նրան այնտեղից հանելու համար, այլ ոչ թե սիրառատ զրույցի մեջ կմտներ մի մարդու հետ, որից ինչ-որ բան է կախված, բայց որը ոչինչ չի ձեռնարկում:

Պետեկամուտների կոմիտեի մեր աղբյուրները հայտնում են, որ կառույցի ղեկավար Էդուարդ Հակոբյանի նկատմամբ համակարգի ներսում դժգոհությունը մեծ չափերի է հասնում, քանի որ Հակոբյանը, ըստ փորձառու աշխատակիցների, չի տիրապետում իրավիճակին, աշխատանքային կոնտակտի մեջ չի մտնում ենթակաների, անգամ՝ տեղակալների հետ, կարելի է ասել՝ մեկուսացած է, ինչի հետեւանքն են նաեւ ՊԵԿ-ում վերջին շրջանում աղմկոտ բացահայտումներն ու ձերբակալությունները: Հակոբյանը, հիշեցնենք, այդ պաշտոնին է նշանակվել 2024 թվականի նոյեմբերին, երբ sms հաղորդագրությամբ, առանց որեւէ հոդաբաշխ բացատրության, ՊԵԿ նախագահի պաշտոնից ազատվեց Ռուստամ Բադասյանը:

ՇՈՒՏՈՎ ՆՈՐ ՑՆՑՈՒՄ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Գործադիր եւ օրենսդիր մարմիններում բաժանված միլիոնավոր դրամների պարգեւավճարների լուրից ցնցված հանրությանը, ըստ ամենայնի, երկրորդ ցնցումն է սպասվում: Բանն այն է, որ կառավարությունում բաժանված մի քանի միլիարդ դրամ կազմող պարգեւավճարները միայն 2025 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով են տրվել, որն ամրագրված է նաեւ պաշտոնական փաստաթղթերում: Հետեւաբար՝ սպասվում է նաեւ երկրորդ կիսամյակի համար պարգեւատրումը: Չնայած Փաշինյանն ու որոշ նախարարներ ներկայացնում էին, թե մեկ տարվա կտրվածքով են 7-8, իսկ Փաշինյանը՝ 14 միլիոն դրամ պարգեւավճար ստացել, սակայն հետո Փաշինյանը հայտարարեց. «Պետական որոշման շրջանակում ես ամսական, եթե չեմ սխալվում, 1.5 միլիոն դրամի չափով վարձատրության ավելացում եմ ունեցել», ինչը նշանակում է, որ իր ամսական աշխատավարձն է բարձրացվել: Իսկ 13 թե 14 միլիոնի միանվագ գումարը վերաբերում է մեկ կիսամյակին, եւ ամսական կտրվածքով ոչ թե 1.5, այլ՝ 2 միլիոն 3 հարյուր հազար դրամի ավելացում է ունեցել: Տեղեկություններ կան, որ առաջիկայում բարձրաստիճան պաշտոնյաները երկրորդ կիսամյակի համար էլ կպարգեւատրվեն: Պարզվում է՝ դեռեւս հունիսին քննարկել են պետական ապարատի աշխատակիցների աշխատավարձերի կտրուկ բարձրացման հարցը, սակայն քանի որ դա օրենքի շրջանակներում ընթացիկ տարում հնարավոր չի եղել, որոշել են պարգեւավճարների տեսքով բարձրացումը կատարել: Միեւնույն ժամանակ Փաշինյանը խոստացել է, որ այդ բարձրացումներն ամրագրվելու են օրենքով՝ ԱԺ-ն հաստատելու է: Պարզ չէ, թե ինչպես են օրենքը շրջանցելով ինչ-որ պիլոտային ծրագիր արել: Այն, ըստ էության, «Պետական պաշտոնյաների վարձատրման մասին» օրենքի խախտմամբ է իրականացվել, բացառապես՝ բյուջեի հաշվին մի քանի հազար մարդու կաշառելու նպատակով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԱՌԻԹ ՄԻԱՅՆ ԱԼԻԵՎՆ ՈՒՆԻ, Ո՛Չ ՀՀ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

*«Հրապարակի» զրուցակիցն Արցախի նախկին պետնախարար **Արտակ Բեգլարյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանն ու Ալեն Սիմոնյանը պարբերաբար շնորհակալություն են հայտնում Բաքվի բռնապետ Իլհամ Ալիեւին: Երեկ էլ՝ Դավոսում, Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցնող Վահագն Խաչատուրյանը միացավ նրանց՝ Ալիեւին շնորհակալական խոսք ասաց: Ի՞նչ եք կարծում՝ ո՞րն է Ալիեւին շնորհակալություն հայտնելու պատճառը: Ադրբեջանական կողմը Արցախում հայկական հետքը ջնջելով է զբաղված, հայկական

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

գերեզմաններն ու վանքերն են պղծում, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանն են դատում, գերիներին չեն վերադարձնում... ո՞րն է նրան շնորհակալություն ասելու պատճառը:

- Իհարկե՝ միանշանակ, մենք Ալիեւին ունենք շնորհակալություն հայտնելու մի շարք պատճառներ: Օրինակ՝ 150 հազար մարդ չսպանեց, սպանեց 5 հազար եւ ավելի մարդ, շնորհակալություն պետք է հայտնենք, որ, օրինակ, Բաքվում ունենք 19 հայ ռազմագերի, այլ ոչ թե, ասենք, 1900: Պետք է շնորհակալ լինենք, որ միայն Արցախով եւ Հայաստանի մի քանի հարյուր քառակուսի կիլոմետր տարածքով է բավարարվել, այլ ոչ թե Սյունիքով, Գեղարքունիքով, Երեւանով եւ այլն, եւ այսպես շարունակ: Բայց, չգիտես ինչու, մենք չենք ուզում նկատել՝ Ալիեւը մեզ երբեւիցե հայտնվել է շնորհակալություն, եւ, ընդհանրապես, եղվել է նման դեպք: Ես կարծում եմ, որ չի եղել ու չի էլ լինելու: Հայաստանի իշխանությունները տվել ու շարունակաբար բավարարում են Ալիեւի պահանջները, կատարում են նրա բոլոր քմահաճույքները, տարածքներ են զիջում եւ այլն եւ ոչ մի խոսք չեն ասում այն բոլոր հանցագործությունների մասին, որոնք կատարել է Ալիեւը՝ իր խունտայի հետ միասին: Չեն խոսում այն մասին, որ արդարադատություն պետք է հաստատվի, որ արդարությունը պետք է վերականգնվի եւ այլն.... եթե սա էլ չեն անում այս իշխանությունները, էլ ինչ սպասել նրանցից: Այսքանից հետո շնորհակալություն հայտնելու առիթ միայն Ալիեւն ունի: Նա պետք է երախտապարտ լինի, որ Հայաստանում գործում է մի իշխանություն, որը երախտապարտ է իրեն, սակայն ոչ երբեք՝ հայ ժողովրդին:

- Իսկ ինչո՞վ է պայմանավորված Նիկոլ Փաշինյանի սերն առ Ալիեւ:

- Պատճառները բազմաթիվ են, առաջին հերթին՝ որ Ալիեւը շարժվում է իրենց օրակարգով կամ հակառակը, սակայն իրենք ներկայացնում են այնպես, որ Ալիեւն իրենց օրակարգով է առաջնորդվում. հայկական խաչմերուկ, իրական Հայաստան եւ այլն: Շնորհակալություններով Ալիեւին փորձում են ցույց տալ, որ իրենք խիստ խաղաղասեր են, որեւէ պահանջ չունեն Ադրբեջանից, միայն թե Ադրբեջանն այնպես անի, որ Նիկոլի իշխանության համար վտանգներ չառաջանան, որպեսզի նա իր պաշտոնը չկորցնի: Ինձ համար, որպես կրթված մարդու, այս ամենն ակնհայտ է: Ճչացող, արհեստական կառուցողականության խաղ են տալիս: Չեմ կարող ասել, թե Նիկոլ Փաշինյանն իսկապես շնորհակալ է Ալիեւին իր հոգու խորքում, թե ոչ, սակայն անգամ եթե շնորհակալ չէ, այդպիսի իմիտացիա է ստեղծում, որը խրախուսվում է որոշ երկրների կողմից: Փաշինյանի գլուխը որոշ ուժեր շոյում են, ասում են՝ կեցցես, որքան խաղաղասեր ես դու:

- Հետեւո՞ւմ եք Իլհամի խոսույթին: Առնվազն գոնե վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում ինչ-որ բան փոխվե՞լ է Հայաստանի մասին նրա հայտարարություններում, որովհետեւ երեկ խորհրդարանում Փաշինյանն ասում էր, որ երկուստեք խոսույթը փոխվել է վերջին շրջանում:

- Որոշ չափով հետեւում եմ: Մի քիչ նրա խոսույթը փոխվել է, սակայն՝ զուտ կոսմետիկ ձեւով: Հաշվի առնենք, որ նա հասել է կարեւոր հանգրվանին, արդեն իսկ Զանգեզուրի ճանապարհի բացման մեծ մասն անցել են, եւ հետո՝ Ադրբեջանն այս փուլում խաղաղասեր ու կառուցողական երեւալու խնդիր ունի: Նա դեռ սիմվոլիկ ժեստեր է անելու Հայաստանին եւ հայ ժողովրդին, ինչը կարող է հայ ժողովրդի մի հատվածի մոտ տպավորություն թողնել, որ Ադրբեջանն ու Թուրքիան Հայաստանի հետ ցանկանում են խաղաղություն հաստատել, իսկ այդ ամենը նախընտրական Հայաստանում կնպաստի, որպեսզի խաղաղության մասին կեղծ նարատիվները մեծ տարածում գտնեն: Այստեղ կա նաեւ այլ գործոն՝ Թրամփի լրացուցիչ ուշադրությունը: Ադրբեջանը նաեւ խնդիր ունի՝ ամերիկյան կողմին սիրաշահելու, որպեսզի ԱՄՆ-Ադրբեջան ռազմավարական հարաբերությունները մտնեն ուժի մեջ, իսկ Ադրբեջանի դեմ դրված սանկցիաներն ամբողջապես հանվեն: Այդ ամենն Ադրբեջանի համար շատ ավելի կարեւոր է, քան Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը՝ սիմվոլիկ ժեստերով: Ակնհայտ է, որ Հայաստանի հետ հարաբերություններն այս փուլում Ալիեւի ձեռքին գործիք են:

- Իսկ ի՞նչ առումով է փոխվել Ալիեւի խոսույթը: Ասում եք, որ կոսմետիկ որոշակի փոփոխություն կա:

- Ապրանքների մատակարարում՝ Ադրբեջանի կողմից եւ նրա միջոցով: Քանիցս արդեն հայտարարել են, որ այդ ամենն իրենց համար դրական է, որ իրենք պատրաստ են երկկողմ առեւտրի, ի դեպ՝ այս մասին ոչ միայն Ալիեւն է խոսում, այլեւ՝ իր նազիր-վեզիրները: Ասում են, որ Հայաստանի հետ խաղաղության դարաշրջան են մտել, բայց խորքային առումով Զանգեզուրի միջանցքի մասին նրանց խոսույթը չի փոխվել, երբեմն-երբեմն պատմական տարբեր իրադարձությունների մեկնաբանությունը նրանց կողմից չի փոխվել: Հայերի դեմ ատելության համակարգը ոչ մի կերպ չի փոխվել, անգամ՝ այն դեպքում, երբ Ալիեւի խոսքում կա փոփոխություն: Պետական, միջին օղակներում, ինչպես նաեւ՝ մեդիայում, քարոզչությունը նույնն է, նույնն է նաեւ կրթական համակարգում: Ի դեպ, նրանք շարունակում են ՀՀ քաղաքներն անվանել ադրբեջանական անվանումներով՝ Ալիեւի հրամանագրով: Ոչ մի հայկական տեղանուն չկա Ադրբեջանի համար՝ ՀՀ ինքնիշխան տարածքում: Իսկ եթե իսկապես փոխվել է իրավիճակը, ապա ինչո՞ւ այս մոտեցումը չի փոխվել: Ռազմավարական առումով Ալիեւը շարունակում է նույն կուրսը: Ալիեւը վերջերս նաեւ հայտարարեց այն մասին, որ ազերիները պետք է բնակեցվեն Հայաստանում: Այս մոտեցումը նույնպես մնացել է անփոփոխ:

ԴԱՎԻԴՅԱՆԸ ՉԻ ՀԵՐՔՈՒՄ, ՊՆ-Ն ՀԵՐՔՈՒՄ Է

Վերջին օրերին ուշագրավ տեղեկություններ են շրջանառվում ՀՀ զինված ուժերի բարձրագույն սպայակազմի ներկայացուցիչների կողմից իշխանություններին ուղղված հավատարմության նոր երդումներ տալու եւ նոր ծառայություններ մատուցելու մասին: Լրատվամիջոցներն արդեն գրել են Հատուկ նշանակության ուժերի հրամանատար, գնդապետ Լեւոն Դավիդյանի մասին, որը լծվել է քահանաներին հավաքագրելու եւ ճնշելու իշխանական պրոցեսին: Լուրը ՊՆ-ն, իր սովորույթի համաձայն, փորձել է հերքել, սակայն բանակում եւ նրան մերձ շրջանակներում խոսում են, որ կեղծ հերքումներ են դրանք: Ի դեպ, 2021 թվականի հայտնի իրադարձությունների ժամանակ, երբ Գլխավոր շտաբի բարձրաստիճան զինվորականները հանդես եկան Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով, հայտնի հայտարարությունը ստորագրողների թվում էր նաեւ Լեւոն Դավիդյանը: Սակայն, քանի որ Փաշինյանն այդ ցուցակի մեծ մասին ազատել է բանակից, թերեւս, գնդապետը որոշել է ամեն գնով պահել իր կարգավիճակը, ուստի փորձում է աջակցել Փաշինյանի հակաեկեղեցական ծրագրի իրականացմանը, որ ամրացնի իր դիրքերը: Բանակում ասում են. «Դավիդյանն այժմ փորձում է ավելի նիկոլական լինել, քան հենց ինքը՝ Նիկոլը», որ քավի «անցյալի մեղքերը»:

Հիշեցնենք. լրատվամիջոցները գրել էին, որ Դավիդյանը շրջայցեր է կատարում իր հրամանատարության ներքո գտնվող զորամասերում եւ հոգեւոր ծառայություն մատուցող քահանաներին ՊՆ ղեկավարության անունից խոստանում է դրամական աջակցություն, եթե իրենց ստորագրությամբ համաձայնեն միանալ տիրադավ եպիսկոպոսների խմբին: Մենք կապ հաստատեցինք Լեւոն Դավիդյանի հետ՝ պարզելու, թե ինչու վերոնշյալ տեղեկությունները չեն դադարում՝ ինքը շարունակո՞ւմ է ներգործել բանակում հոգեւոր ծառայություն մատուցող քահանաների վրա: Նա մեզ հետ զրույցում համառորեն որեւէ մեկնաբանություն չտվեց, միայն հորդորեց՝ բացառությամբ պաշտոնական հայտարարություններին հետեւել: Որքան էլ կրկնեցինք հարցը, նա այդպես էլ չհերքեց իրեն վերագրվող արարքները: Մինչդեռ, եթե մարդն անմեղ է, առաջին բանը, որ նման դեպքերում անում է, հերքում է իրեն վերագրվող գործողությունը:

Նոյեմբերյանում «88»-ի գործերը լավ չեն

Նոյեմբերյան քաղաքից հայտնում են, որ անցյալ տարի սահմանամերձ այս փոքր քաղաքում բացված «88» սուպերմարկետի առեւտրական գործերը լավ չեն ընթանում: Ամանորին տոնական առեւտրի զգալի մասը բաժին է ընկել քաղաքի այլ սուպերմարկետի, իսկ «88» սուպերմարկետում տարեմուտին կատարված վաճառքի ծավալները փոքր են եղել եւ չեն արդարացրել սեփականատերերի ակնկալիքները: Նոյեմբերյանցիները դա բացատրում են «88» սուպերմարկետի ոչ ճիշտ գնային քաղաքականությամբ: Սովորաբար նորաբաց սուպերմարկետը, որպեսզի գնորդներին իր կողմը գրավի, սահմանում է ցածր գներ, ինչը սուպերմարկետը չի արել: Նոյեմբերյանի բնակիչները դժգոհ են նաեւ «88» սուպերմարկետում ապրանքների դասավորությունից, տեղադրությունից: Նրանք ասում են, որ այլ սուպերմարկետներում վաճառվող ապրանքները գնորդներին լավ տեսանելի են, իսկ «88»-ում ապրանքների տեղադրությունը, դրանց տեսանելիությունը հարմար չեն գնորդներին, գուցե դա էլ է դեր խաղում, որ մարդիկ չօգտվեն: Նոյեմբերյանում էլ են «88» սուպերմարկետը կապում Աննա Հակոբյանի անվան հետ, չնայած նա քանիցս հերքել է իր առնչությունն այդ սուպերմարկետի հետ եւ անգամ կոչ է արել բոյկոտել այն՝ առեւտուր չանել այնտեղից:

Ովքեր են մուծվել պետությանը՝ քրեական հետապնդումների շրջանակներում

Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության հսկողության ներքո քննվող քրեական վարույթներով ամփոփվել են 2025 թվականի ընթացքում պետությանը պատճառված վնասի վերականգնման ցուցանիշները, եւ, ինչպես հաղորդում է դատախազությունը, 80 միլիոն ԱՄՆ դոլար վնասի վերականգնում է ապահովվել: Գլխավոր դատախազությունից հայտնում են. «Վերականգնված վնասի ցուցանիշներում ներառված է նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող՝ 1 միլիարդ 755 միլիոն դրամ արժեքով ընկերությունը: Ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 15 միլիարդ 440 միլիոն դրամ, որը համարժեք է շուրջ 41 միլիոն 174 հազար ԱՄՆ դոլարին: Համեմատության համար նշենք, որ նշված ցուցանիշը շուրջ 2,4 միլիարդ դրամով գերազանցում է 2024 թվականի վնասի ցուցանիշը»: Առավել ուշագրավ է այն անձանց ցանկը, ովքեր տարբեր քրեական գործերի շրջանակներում վնասի վերականգնում են արել՝ պետությանը վճարելով ինչ-որ գումարներ: Դատախազությունը հաղորդում է. «Պետությանը պատճառված վնասի վերականգնումներ են կատարվել Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ եւ լիազոր նախկին դեսպան Միքայել Մինասյանի, ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եղբոր, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Արագած Ախոյանի եղբոր եւ նրանց հետ առնչություն ունեցած անձանց կողմից կատարված հանցանքների վերաբերյալ քննվող, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Կարո Կարապետյանի ընտանիքի անդամների, նախկին պատգամավորներ Նահապետ Գեւորգյանի, Հարություն Փամբուկյանի եւ նրանց ընտանիքի անդամների կողմից կատարված հանցանքների վերաբերյալ քննվող եւ մի շարք այլ քրեական վարույթների շրջանակներում»:

Իհարկե, 80 միլիոն դոլարը մեծ գումար չէ, որպեսզի համեմատության եզր ունենանք, բավական է հիշել, որ, ըստ հրապարակային տվյալների, ԱՆԻՖ հիմնադրամի՝ ՀՀ բյուջեին պատճառած վնասը կազմել է 63 միլիոն դոլար:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՄԱՐԴ ԿԱ՝ ԾԻԱԾԱՆԻ ՅՈԹ ԳՈՒՅՆ ՈՒՆԻ, ԲԱՅՑ ՄԱՐԴ ԷԼ ԿԱ՝ ԻՆԸ ԳՈՒՅՆԱՆԻ Ա

ԳՈՐԻՍ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն օրերս շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մի նախագիծ, որով հերթական խոշորացման ծրագիրն է առաջարկում Ստեփանավան, Եղեգնաձոր եւ Գորիս համայնքների համար:

Նախատեսվում է Գորիսը դարձնել մեգահամայնք՝ միավորելով Տաթեւ եւ Տեղ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված 28 բնակավայրով: Այս որոշումը ցնցումներով է ընդունել Տեղ համայնքի ՔՊ-ական ղեկավար՝ հանրահայտ Դավիթ Ղուլունցը: Բանն այն է, որ որոշումն օրենքի տեսք ստանալուց հետո կյանքի կկոչվի, եւ աշնանը հերթական ՏԻՄ ընտրությունները կանցկացվեն նորից խոշորացվող համայնքում: Բնականաբար, այս պարագայում Ղուլունցի շանսերը գրեթե զրոյական կդառնան՝ նորից համայնքապետ դառնալու, եթե հանկարծ այդ ընտրություններին մասնակցի Գորիսի ներկայիս համայնքապետ Առուշ Առուշանյանը, որն այլեւս ՔՊ-ական իշխանությունների նախընտրելի համայնքապետն է, եւ Ղուլունցը, ըստ էության, նրան է զիջելու իր պաշտոնը: Այստեղ դեր է խաղում ոչ միայն այն, որ Առուշ Առուշանյանն այլեւս իշխանությունների սիրելին է, այլ նաեւ այն, որ Գորիսը նշված երեք համայնքներից ամենամեծն է, որտեղ պարզ է, որ համայնքապետ Առուշանյանի նկատմամբ դրական վերաբերմունք կա, ուստի նրա հաղթանակն անխուսափելի են համարում: Ի դեպ, հնարավոր է, որ այս նախագիծը հատուկ են հենց հիմա դրել շրջանառության մեջ՝ իշխանությունը համապետական ընտրություններից առաջ փորձում է Առուշանյանին նման գայթակղիչ նախագծերով իր կողքին պահել, շահագրգռել, որ նա լավ աշխատի ՔՊ-ի օգտին, ընդդիմությանը չօգնի, որ հետագայում մեգահամայնքապետ դառնա: Հիշեցնենք, որ նախորդ՝ 2021-ի ընտրություններին Առուշ Առուշանյանը պատգամավորության թեկնածու էր առաջադրված Ռոբերտ Քոչարյանի ցուցակով եւ Վահե Հակոբյանի՝ Սյունիքի համայնքապետերից կազմված «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամ էր: 4-5 տարվա ընթացքում նա ոչ միայն Ռ. Քոչարյանի, այլեւ Վահե Հակոբյանի կուսակցությունից է դուրս եկել եւ իր նախկին ընկերներից հրաժարվել:

Գորիսի խոշորացման նախագիծը ՔՊ-ում ներկուսակցական բուռն քննարկումների առիթ է դարձել: Մեզ պատմեցին, որ Ղուլունցը մտերիմների մոտ անգամ սպառնացել է՝ եթե խոշորացումը կյանքի կոչվի, ինքը դուրս կգա ՔՊ-ից: Պաշտոնավարման ընթացքում բազում աղմկահարույց պատմություններով աչքի ընկած Դավիթ Ղուլունցը Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի քրոջ որդին է: Նրա քեռին հիմա Սուրեն Պապիկյանի խորհրդականն է, իսկ քեռորդին՝ Սյունիքի դատախազը:

Դավիթ Ղուլունցը երեկ մեզ հետ զրույցում չթաքցրեց, որ կողմ չէ խոշորացմանը: «Ես իմ կարծիքը հայտնել եմ իրենց, որ շատ մեծ է լինելու, բարդ է լինելու կառավարել, մեր համայնքն էլ նամանավանդ՝ սահմանամերձ... Դե, կառավարության որոշում է, համարում են, որ մենք փոքր ենք, պետք է միավորվենք: Եթե կառավարությունը որոշել է, ես բան չունեմ ասելու»,- ասաց նա: Փաստորեն, Դուք հաջորդ ժամկետում կզրկվեք համայնքապետի պաշտոնից: «Այնպես չէ, որ ես կցված եմ իմ աթոռին, կառավարությունը եթե որոշել ա, ես դեմ չեմ, թե ով կլինի, Աստված առաջ, ժամանակն է որոշիչ»: Բայց ասում են՝ այնքան եք նեղվել, որ ասել եք՝ ՔՊ-ից դուրս կգամ: «Ես առաջին անգամ Ձեզնից եմ լսում: Էնպես չի, որ մնացածների պես ծիածանի յոթ գույների պես ես փոխվող եմ, ես մի տեսակ եմ ապրում, եթե քաղաքական թիմը որոշում ա՝ ես դուրս եմ գալիս, ուրեմն դուրս եմ գալիս, ես ոչ մտածելու բան ունեմ, ոչ դիլխոր եմ, ոչ էլ մի բան, իմ նպատակն այն է, որ համայնքն իմ օրոք զարգացել է: Ես նեղվող տղա չեմ, որոշել են, էլի խնդիր չկա, իրենց հետ եմ էլի»: Դուք Ք՞ել եք կարծում, որ Առուշ Առուշանյանի համար են սա անում, որը թեքվել է ձեր՝ իշխանության կողմը: «Իրան հարցրեք, նոր ասացի, չէ՞, որ մարդ կա՝ ծիածանի յոթ գույն ունի, բայց մարդ էլ կա՝ ինը գույնանի ա...»: Առուշանյանի՞ն նկատի ունեք՝ ինը գույնանի ասելով: «Չէ, խի՞... ես իրա հետ լավ հարաբերությունների մեջ եմ, ընդհանրապես եմ ասում, ես մի տեսակ ապրող եմ, բայց քաղաքականությունը, որ նայում ես, քիչ չեն, չէ՞, ընտենց մարդիկ: Ես նորից եմ ասում՝ իմ աթոռը ժառանգական չի, ոչ էլ կառչված եմ, ասեցի՝ իմ նպատակն ինչն է, որ թվարկեմ՝ ինչեր ենք արել, կարող ա մինչեւ առավոտ թվարկեմ, իմ նպատակը դա է եղել, որ համայնքը պաշտոնավարման հինգ տարվա ընթացքում զարգանա»,- նեղսրտած ասաց համայնքապետը:



Նյութերը՝ Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ

ԻՍԿ ԿԱՆՈՆԱԳԻՐՔՆ Ի՞ՆՉ ԵՂԱՎ

Դեկտեմբերի սկզբներին իշխող «Քաղպայմանագիր» կուսակցությունը հայտարարեց էթիկայի կանոնագիրք ընդունելու մասին, որով իշխող ուժի անդամները պարտավորվում են չհայհոյել, չվիրավորել եւ այլն, քանզի իրենց կանոնագրքում ասվում է, որ ՔՊ-ն պատասխանատվություն է զգում երկրում քաղաքական միջավայրի, մթնոլորտի, կուլտուրայի զարգացման գործում: Այս դարակազմիկ իրադարձության հետ կապված՝ հանդես էր եկել նաեւ ՔՊ առաջնորդը, գրելով. «Էթիկայի կանոնագրքում ստանդարտներ ենք սահմանում ինքներս մեզ համար՝ դրանով իսկ հայտարարելով ինքներս մեզ հայհոյախոսության, անձնական թիրախավորման, վիրավորանքի դաշտից դուրս դնելու, ինչպես նաեւ՝ բարեվարքության լավագույն ստանդարտներին մեր նվիրվածության մասին:

Այնպես որ, երբ հայհոյանքին հայհոյանքով, վիրավորանքին վիրավորանքով չպատասխանենք, խնդրում ենք դա չընկալել որպես թուլություն կամ վախվորածություն, այլ՝ նվիրվածություն մեր իսկ ընդունած էթիկայի կանոնագրքին:

Այս հայտարարությունից երկու ամիս էլ չի անցել, այս ընթացքում գրեթե ոչ ոք չի նկատել, որ իշխող ուժը զսպվածություն է դրսեւորում իր խոսքում, ձեռնպահ է մնում տարբեր ուժերին ու մարդկանց վիրավորելուց, հայհոյելուց: Ինչպես ասում են՝ կարմիր կովը կաշին չի փոխում:

Մենք գրեթե ամեն օր ականատես ենք լինում, թե ինչպես են Փաշինյանն ու թիմակիցները, իրենց արբանյակ քարոզիչներն ու քաղաքագետները, լրագրողներն ու լրատվամիջոցները հրապարակային շռայլում իրենց «ոսկեղենիկ» լեքսիկոնը:

Նախօրեին խորհրդարանում հարցուպատասխանի ժամանակ Փաշինյանը հերթական անբռնազբոս պահվածքը դրսեւորեց ընդդիմադիրների նկատմամբ՝ նրանց տհաճ հարցերին ի պատասխան նետելով. «գլուխներդ պատովն եք տվել», «դուրս մի տվեք, կրկնում եմ՝ դուրս մի տվեք», իսկ Արարատ Միրզոյանը «ողորմելի» անվանեց ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանին: Սա է այս իշխանության իրական դեմքը, երբ խոսքով բարեվարք են, բայց այդ կանոնագրերի հետեւում իրականում ստախոս, անպատասխանատու, իրենց խոսքից հրաժարվող մարդիկ են կանգնած:

ԻՐԱՎՈՒՆՔ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԸ ԲՈԼՈՐԻՆ ՓՈԽԱՆՑԵԼ Է, ՈՐ ՉԻ ԿՈՏՐՎԵԼՈՒ

«Հայրենիք» կուսակցության գլխավոր քարտուղար, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Խաչիկ Գալստյանը դեկտեմբերի 30-ից անազատության մեջ է, նրա համար 2 ամսվա կալանք են սահմանել: Կալանավորվել է Վաղարշապատում նոյեմբերին անցկացված ավագանու ընտրությունների առնչությամբ, իբրեւ թե ընտրակաշառք տալու գործով:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ընդհանուր առմամբ, 23 մեղադրյալ է ներգրավվել այս գործով: Նրանց թվում է նաեւ Վաղարշապատի ավագանու ընտրությունների համամասնական ցուցակի 2-րդ համարը զբաղեցրած Արամ Քոչարյանը, որը Մայր Աթոռում է աշխատում, եւ որին մեկամսյա կալանք է տվել դատարանը:

Ըստ մեղադրանքի, պրոֆեսոր Խաչիկ Գալստյանը, որին ոչ մի կերպ հնարավոր չէ պատկերացնել հանցագործի դերում, իբր օժանդակել է ընտրակաշառք տալուն՝ իր կուսակցության օգտին քվեարկելու դիմաց: Գալստյանի պաշտպանները հայտարարել են, որ նա ոչ թե ընտրակաշառք է բաժանել, այլ իր կուսակցության Էջմիածնի շտաբի աշխատողներին գումար է տվել, որ գնան, իրենց համար ուտելիք գնեն: Սա կարելի՞ է դիտարկել որպես ընտրակաշառք: Գալստյանի պաշտպան **Արսեն Բաբայանը** պատասխանում է. «Բացարձակապես՝ ոչ: Որոշակի ծախսերի փոխհատուցում եղել է, բնականաբար, որը գրանցված է, ու դա դիտարկում են որպես ընտրակաշառք: Բայց ընտրակաշառքը նա է, որ դու տալիս ես, ասում ես՝ առ քեզ փող, գնա ընտրի ինձ, կամ՝ առ քեզ ծառայություն, եւ ինքն էլ համաձայնում է: Իսկ այստեղ աշխատողներ են եղել, հանձնաժողովի անդամներ, որոնք տեւական ժամանակ աշխատանք են կատարել, եւ նրանց տրանսպորտի ծախսերն է պետք եղել հատուցել, սննդի գումար: Դա միշտ բոլորն էլ արել են»: Նա վստահեցնում է, որ իր պաշտպանյալի դեմ ոչ մի ապացույց չկա, եւ վերջինս մեղադրանքը չի ընդունում:

«Մեղադրանքը հիմնավորող որեւէ ուղիղ ապացույց գոյություն չունի»,- ասում է նա:

Ըստ նրա, Արամ Քոչարյանի մեղադրանքն էլ ավելի աբսուրդային է, սակայն նախաքննության փուլում փաստաբանը չի կարող ավելին ասել: «Ուղղակի անունը ցուցակի մեջ եղել է, էդքան բան»: Արամ Քոչարյանը Վաղարշապատի բնակիչ է, երբեւիցե կուսակցության անդամ չի եղել, քաղաքականությամբ չի զբաղվել:

Արամ Քոչարյանի շահերը պաշտպանում է փաստաբան **Կարինե Մարգարյանը**: Նա ասում է, որ Քոչարյանի մեղադրանքում, որը նույնն է՝ ընտրակաշառք բաժանելուն օժանդակելը, չկա ոչ մի որոշակիություն: «Եթե Խաչիկ Գալստյանի մասով որոշակի, չնայած չհիմնավորված նախադրյալներ կան էն առումով, որ նա սննդի փող է բաժանել շտաբի աշխատողներին, Արամի մասով սա էլ չկա, մեղադրանքն ամբողջությամբ շինծու է, միայն ելնելով այն հանգամանքից, որ նա նախընտրական ցուցակում զբաղեցրել է ինչ-որ հորիզոնական: Չկա որեւէ հիմք, որեւէ նախադրյալ»: Հավանաբար գիտակցելով սա՝ դատարանն Արամ Քոչարյանին ոչ թե երկու, ինչպես Խաչիկ Գալստյանի դեպքում է, այլ մեկ ամսով է կալանավորել: «Դատարանը, հավանաբար, հասկացել է, որ Արամի առումով հիմքեր չկան, հիմնավոր կասկածը բացակայում է: Արամի կալանավորումը զուտ քաղաքական բնույթ է կրում»,- նշում է փաստաբանը:

Արամ Քոչարյանի կալանքի ժամկետը լրանում է հունվարի 30-ին, դրանից 5 օր առաջ պետք է նախաքննության մարմինը միջնորդություն մուտք անի դատարան: Ի դեպ, դատարանի փնթի աշխատանքի պատճառով Արամ Քոչարյանի փաստաբանը չի կարողացել բողոքարկել կալանքի մասին որոշումը՝ այն պատճառով, որ վերջինս կողմին չի տրամադրվել: «Դեռ դատարանի որոշումը մինչեւ հիմա չենք ստացել, միջոցներ ձեռարկվել են, որ այն ստանանք, ընդամենը երեկ է առաջին օրը դատարանից հայտնեցին, որ վերջապես ուղարկել են մեզ դատական ակտը: Ստանալուն պես բողոքարկելու ենք»,- ասում է Կարինե Մարգարյանը:

Խաչիկ Գալստյանի փաստաբանները հունվարի 14-ին կալանքի որոշումը բողոքարկել են, բայց այս դեպքում էլ բողոքը վերաքննիչ չի հասել: Հակակոռուպցիոն դատարանը պետք է վարույթի նյութերն անմիջապես ուղարկեր Վերաքննիչ դատարան, որն էլ 7-օրյա ժամկետում պետք է որոշում կայացներ, սակայն մինչ օրս փաստաբանները սպասում են:

Այսօր՝ հունվարի 23-ին, ժամը 12.00-ին «Հայրենիք» կուսակցության երիտթեւը, քաղբանտարկյալներ Խաչիկ Գալստյանի եւ Արամ Քոչարյանի աջակիցները բողոքի ակցիա են իրականացնելու ԵՄ գրասենյակի դիմաց: Ակցիայի մասնակիցները Գալստյանի եւ Քոչարյանի ապօրինի, քաղաքական դրդապատճառներով պայմանավորված կալանքի վերաբերյալ նամակ են փոխանցելու ԵՄ դեսպանին: «Հայրենիք» կուսակցության անդամներից **Լիլիթ Պետրոսյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասաց, որ Խաչիկ Գալստյանի տրամադրության, տրամադրվածության եւ ամեն ինչի մասին մշտապես տեղեկանում են նրա պաշտպաններից:

«Տրամադրությունը մարտական է, վերջին անգամ բոլորիս փոխանցել է, որ ուժեղ է, չի կոտրվելու, եւ իր համար պատիվ է հայրենիքի համար էս ամենով անցնելը: Շատ-շատ մարդիկ են հարցնում նրանից՝ եւ ուսանողներ, եւ, առհասարակ, քաղաքացիներ: Մեզ՝ բոլորիս համար Խաչիկ Գալստյանի կալանքն աբսուրդ է: Աչքովս տեսնեմ, չեմ հավատա, որ նա որեւէ հակաօրինական բան անի»,- ասում է Լիլիթը:

ՀԳ. *Խաչիկ Գալստյանը վերջին մեկ տարին ամենշաբաթյա պարբերականությամբ մասնակցել է «Հրապարակային շաբաթ» հաղորդաշարին, հանդես է եկել սուր, քննադատական վերլուծություններով, գուցե դա եւս դեր է խաղացել նրան կալանավորելու հարցում, եւ սա հերթական փորձն է՝ մի քննադատող բերան էլ փակելու ուղղությամբ:*

ԱՄԱՅԱՑԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ՝ ՃԵՐՄԱԿԱՎԱՆ ԵՎ ԳԵՂԱՏԱՓ

Շատերը, լսելով Ճերմակավան եւ Գեղատափ բնակավայրերի մասին, չեն իմանում, թե դրանք որտեղ՝ Հայաստանի որ մարզում են գտնվում: Դրանք Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղին պատկանող ամայացած բնակավայրեր են, որոնք իրենց հայեցի անվանումները ստացել են 1991թ. ապրիլի 3-ին: Խաչարձան գյուղը խորհրդային տարիներին բնակեցված է եղել ադրբեջանցիներով, այն կոչվել է Փոլադ: Ադրբեջանցիների հեռանալուց, Ադրբեջանից փախստական մեր հայրենակիցների Հայաստան տեղափոխվելուց հետո Փոլադ բնակավայրը հայացավ՝ դարձավ Խաչարձան: Այստեղ ներկայում հաշվառված է 401 բնակիչ, փաստացի բնակիչների թիվը 360 է:

Խաչարձանում բնակվում են Ադրբեջանի Դաշքեսանի, Շամքորի, Շամախիի, Իսմայիլի շրջանների, Բաքու եւ Կիրովաբադ քաղաքների նախկին բնակիչներ, որոնք իրենց բարեկեցիկ տներն ու ունեցվածքը թողնելով Ադրբեջանում՝ մազապուրծ տեղափոխվեցին Հայաստան, որ Սումգայիթի բնակիչների ճակատագրին չարժանանան:

Դիլիջան քաղաքից 23 կմ հեռավորությամբ գտնվող Խաչարձան գյուղի մուտքն ասֆալտապատ է: Շենի տները բնակեցված են, դատարկ է միայն մի քանի տուն, որոնց բնակիչները վաղուց Ռուսաստան են տեղափոխվել: Խաչարձանում տներ են գնել նաեւ Երեւանի մի քանի բնակիչներ, որոնք այդ տները որպես ամառանոց են օգտագործում՝ ամառվա ամիսներին ժամանելով: Երեւանի երկու բնակիչ էլ գյուղում հողամասեր գնելով՝ այնտեղ հյուրատներ են կառուցում: Խաչարձան գյուղի բնակիչներից մեկը եւս հյուրատուն ունի, սակայն այն վերակառուցման, ընդլայնման փուլում է: Գեղեցիկ բնություն ունեցող Խաչարձանի բնակչությունն ապահովված է խմելու մշտական ջրով, լուծված է նաեւ գյուղի հողերի ոռոգման ջրի խնդիրը: 2003 թվականից Խաչարձան համայնքի ղեկավար, համայնքի խոշորացումից՝ 2016 թվականից հետո բնակավայրի վարչական ղեկավար նշանակված Գագիկ Շահնազարյանը մեզ հայտնեց, որ Խաչարձան գյուղից մինչեւ Ճերմակավան բնակավայր 7 կմ է, Գեղատափը գտնվում է 14 կմ հեռավորությամբ: Խորհրդային ժամանակաշրջանում այստեղ բնակվելիս են եղել ադրբեջանցի անասնապահներ: Իսկ դրանից ավելի առաջ դրանք հայկական բնակավայրեր են եղել, որի ապացույցը Ճերմակավանի գյուղատեղին, գերեզմանոցը եւ 10-12-րդ դարերի եկեղեցին է: Գետիկ գետի հովտի ձախափնյա լանջին գտնվող Ճերմակավանի տարածքում, բլրի վրա հառնող եկեղեցուց մի պատ է մնացել: Եկեղեցին հայտնի է նաեւ Աղքիլիսա, Սպիտակ եղցի անուններով: Ճերմակավանը խորհրդային շրջանում կոչվել է Աղքիլիսա: Գագիկ Շահնազարյանը մեզ հայտնեց, որ այդ տարածքում են գտնվում իրենց գյուղի վարելահողերը, արոտավայրերը, խորտհարքները:

Իսկ Գեղատափը՝ Մուրթելը, 1897թվականին ունեցել է 43 բնակիչ, 1979 թվականին՝ 174, 1989 թվականին՝ 35: Այն ծովի մակերեւույթից 1700 մետր բարձրության վրա է գտնվում, այդտեղ խստաշունչ ձմեռներ են լինում: Խորհրդային շրջանում Մուրթելում նույնիսկ դպրոց է գործել, սակայն էլեկտրական լուսավորություն չի եղել: Ժամանակի ընթացքում կենցաղային դժվարությունների պատճառով Մուրթելի բնակիչները ցած են իջել՝ Փոլադ գյուղ: 1990-ական թվականներից Գեղատափում բնակություն է հաստատել Ադրբեջանի Շահումյանի շրջանից բռնագաղթած 16 ընտանիք, ավելի ճիշտ՝ այդ ընտանիքների միայն տարեց անդամները, որոնք Գեղատափում զբաղվել են անասնապահությամբ: Գ. Շահնազարյանն ասաց, որ Չարենցավանում բնակվել են Շահումյանից վերաբնակվածներ, ովքեր ֆինանսապես օգնել են համագյուղացիներին՝ Գեղատափում քարե փոքր տներ կառուցելու: Այդ ընտանիքները փաստացի բնակվելով Գեղատափում՝ գրանցված են Չարենցավանում, Հրազդանում: Նրանք Չարենցավանից եւ Հրազդանից Գեղատափ էին հասնում Սեմյոնովկա գյուղով, որից Գեղատափի հեռավորությունը 7 կիլոմետր է: Տարիների ընթացքում Գեղատափում ապրող ծերերը մահացել են. 2011 թվականին գյուղն ունեցել է ընդամենը 8 բնակիչ: Ավելի քան 10 տարի այնտեղ ոչ ոք չի բնակվում: Բայց Դիլիջան քաղաքում եւ մերձակա համայնքներում վերջին տարիներին զբոսաշրջությունը բուռն զարգանում է, մարդիկ են գալիս հանգստանալու, տան վարձերն են աճել, կյանքը սկսել է փոխվել: Լքված, ամայացած Ճերմակավան եւ Գեղատափ գյուղերն իրենց բնության ու տեղադրության շնորհիվ կարող են հրաշալի զբոսաշրջային վայրեր դառնալ, եթե, իհարկե, ՔՊ-ական իշխանությունը մտածված չամայացնի եւ հաջորդիվ էլ սրանք չհանձնի մեր թշնամիներին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՕՐՎԱ ԿԵՍԸ ԶԱՐԿՈՒՄ ԵՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՆՅԱՐԴԵՐԻՆ, ՄՅՈՒՍ ԿԵՍԸ՝ ԹՄԲՈՒԿՆԵՐԻՆ

Վարչապետը սովորել է նվագել ակուստիկ հարվածային գործիքներով: Դա, իհարկե, ավելի լավ է, քան մարդկանց նյարդերի վրա նվագելը, որը, սակայն, չի նահանջել, այլ զուգահեռաբար շարունակվում է. հիմա ուղղակի ավելացել է թմբուկը:

Եվ մտածում ենք՝ գուցե կա գաղտնիք. օրվա կեսը զարկում ես մարդկանց նյարդերի լարերին, մյուս կեսը՝ ազնվորեն զարկելու համար նախատեսված թմբուկներին: Պարապած մարդու համար դա, ուրեմն, դժվար չէ: Իսկ ընդհանրապես դա բավականին դժվար է, նկատի ունեմ՝ թմբուկ զարկելը:

Հարց ընկերոջը՝ ամենագետ ChatGPT-ին՝ խնդրում եմ օգնել ինձ. որքա՞ն ժամանակ է հարկավոր վատնել, որպեսզի սովորես թմբուկ զարկել:

«Ոչ պրոֆեսիոնալ, բայց դրան մոտ հմտությունների համար սովորելու միջին տեւողությունը, եթե ամեն օր պրակտիկա ես անում՝ 1-2 ժամ, առանց ընդհատումների, պահանջվում է մոտ 2-3 տարի: Եթե պրակտիկան ավելի ինտենսիվ է (օրական 3-4 ժամ), կարող է արագանալ՝ մոտ 1,5-2 տարի: Աշխատանքի հիմնական ուղղությունները նշված դեպքում. հիմնական ռիթմերը՝ 4/4, 3/4, 6/8, տաբլայի (բոնգոյի) սեթի ռիթմերը: Դասական ու ջազ երաժշտության հարվածային նրբություններ՝ դինամիկա, ֆիլինգ, սոլո հնարքներ: Բազմաշերտ ու համակցված գործիքներով՝ ձեռքեր + ոտքեր + միջին պերքյուսիոն գործիքներ միաժամանակ օգտագործելու համար ամենաքիչը անհրաժեշտ է սովորել 1-1,5 տարի՝ յուրաքանչյուր պարապմունքը՝ 1-2 ժամ, շաբաթը առնվազն 3 օր: Եվ, իհարկե, ջանքերը պետք է կրկնապատկել, եթե որոշել եք ցուցադրել կորպորատիվ նվագ՝ խմբի հետ ճիշտ ժամանակացույցի մեջ գործիքներին համապատասխանելով»:

Վարչապետը, իր ասելով, դա սովորել է կարճ ժամանակում: Արհեստական բանականությունը նրա ընդունակությունները չափել չկարողացավ, ոչ էլ ազնվությունը որակեց՝ սովորելու իրական ենթադրել ժամկետների մասով: Ինչեւէ: Փաստ է, մարդը հարվածում է, նվագում է, կազմել է համույթ, հրավիրել է համերգ:

Ես, անկեղծ ասած, չունեմ այդքան ազատ ժամանակ: Ես չեմ կարող իմ ամենասովորական պարտականություններին օրվա մեջ ավելացնել ակուստիկ հարվածային գործիքների վրա անգամ մեկ ժամ զարկելու հաճույքը, փաստորեն, որովհետեւ՝ ես գործեր ունեմ, ես վարչապետ չեմ:

Մինչդեռ պետք էր կարծել, որ օրվա 24 ժամը՝ բավականին մեծ խնդիրներ ունեցող երկրի ղեկավարի համար, խիստ անբավարար է աշխատելու համար, բայց... այ քեզ հրաշք. Նիկոլ Փաշինյանին հաջողվում է հեծանիվ քշել, զարգացնել երաժշտական ընդունակությունները, հետեւել բոլորի սոցցանցային գրառումներին, պատասխանել դրանց, լսել եւ խմբագրել գաղտնագրված աուդիո եւ վիդեո նյութեր, այցելել գյուղերի դպրոցներ, մանկապարտեզներ, ուղեւորվել գործուղումների, հրահանգավորել կուսակցականների ելույթներն ու հարցերը, ժամանակացույց կազմել պատարագակենտրոն քաղաքականության համար, ցանկավորել մասնակիցներին, չաղոթել կաթողիկոսի համար՝ բարենորոգել Եկեղեցին, առավոտյան ընտրել երաժշտություն՝ ռիլի համար, սիրել բոլորին, ուղարկել SMS-ներ նրանց, ում արդեն չի սիրում, նվագել ակուստիկ հարվածային գործիքներով, հանդերձափոխվել, գնալ հեծանիվ քշելու, լինել կուսակցության գրասենյակում եւ երկարատեւ քննարկումներ անել թիմակիցների հետ, անգամ՝ անձնական թեմաներով, կարդալ եւ քննարկել նրանց անձնական նամակները, անել էլի բաներ, որպեսզի... պետության համար օգտակար ոչինչ չանել:

Իսկ ե՞րբ է նա հասցնում աշխատել իր պաշտոնի անձնագրից՝ օրենքից բխող պարտականությունների շրջանակում: Տարբեր ոլորտների բազմապիսի խնդիրները ե՞րբ է հասցնում քննարկել, վերլուծել, որոշել եւ լուծել՝ վերջապես: Ինչպե՞ս է կարողանում այդքան արդյունավետ օգտագործել այդ եղած-չեղած 24 ժամը, որի մի որոշ հատված, այնուամենայնիվ, պետք է նվիրի քնին, ուտելուն, օրգանիզմի կենսագործունեությունն ապահովող այլ անհետաձգելի կարիքներին: Ինչպե՞ս:

Մեկ հոդված, մեկ ռեպորտաժ, միայն մեկ անգամ սննդի ընդունում, լուրերին հետեւելու համար մի փոքր ժամանակ, սուրճի 2 ընդմիջում, մի քանի հեռախոսազանգ, մեկ հարցազրույց եւ մեկ լոգանք, եւ օրն արդեն ավարտված է, պարոնայք: Հարվածային գործիքները մնացին, հեծանիվի մասին հիշելու ժամանակ էլ չեղավ: Հաշվեք, դիտարկեք ձեր օրը. ինչո՞ւ չեք զարկում թմբուկ եւ քշում հեծանիվ, քանի՞ ժամ, որպե ամսվա մեջ կարող եք ձեզ թույլ տալ անգործություն եւ չկորցնել աշխատանքը:

Գաղտնիքը, որ որեւէ պետական հիմնարկ ուղղակի չի աշխատում, որեւէ հարցով, բողոքով, խնդրով որեւէ գերատեսչության դիմելն անիմաստ է, հենց սրանում է: Պետությունը, փաստորեն, չի կառավարվում. կա մեկ գերնպատակ՝ PR, այսինքն՝ զարմացնել, հիացնել, գայթակղել, մոլորեցնել հանրությանը, այսինքն՝ ընտրողին, ինչպես նաեւ՝ վարկաբեկել, չեզոքացնել մրցակիցներին, եւ այդ նպատակի համար ծախսվում են օրվա բոլոր ժամերը: Այդպես է արդեն տեւական ժամանակ եւ այդպես կլինի մինչեւ հանջվում է մոտ 2-3 տարի: Եթե պրակտիկան ավելի ինտենսիվ է (օրական 3-4 ժամ), կարող է արագանալ՝ մոտ 1,5-2 տարի: Աշխատանքի հիմնական ուղղությունները նշված դեպքում. հիմնական ռիթմերը՝ 4/4, 3/4, 6/8, տաբլայի (բոնգոյի) սեթի ռիթմերը: Դասական ու ջազ երաժշտության հարվածային նրբություններ՝ դինամիկա, ֆիլինգ, սոլո հնարքներ: Բազմաշերտ ու համակցված գործիքներով՝ ձեռքեր + ոտքեր + միջին պերքյուսիոն

Շաքե ԱՎՈՅԱՆ

ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵՔ՝ ԹՇՆԱՄԻ՞ ԵՆ, ԹԵ՞ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Հունվարի 20-ին Հայաստանի վարչապետի կայքում տեղեկություն հրապարակվեց այն մասին, որ Նիկոլ Փաշինյանն ընդունել է գործարար Վլադիմիր Եվտուշենկովին: Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել ՀՀ-ում տնտեսության ընդհանուր զարգացումների, ինչպես նաեւ՝ պետություն-մասնավոր հատված փոխգործակցության շուրջ: Ոչ մի խոսք այն մասին, թե ով է Վլադիմիր Եվտուշենկովը, ինչով է զբաղված, եւ ինչու է աշխարհի տասնյակ եւ հարյուր միլիոնավոր գործարարների մեջ Փաշինյանը հենց նրան ընդունել: Մինչդեռ Եվտուշենկովը հայտնի է նրանով, որ «ԱՖԿ Սիստեմա» ընկերության հիմնական սեփականատերն է, նրան է պատկանում ընկերության բաժնետոմսերի 49 տոկոսը, իսկ որդուն՝ Ֆելիքս Եվտուշենկովին՝ 15 տոկոսը: Հայր եւ որդի Եվտուշենկովները միասին վերահսկում են ընկերության բաժնետոմսերի 64 տոկոսից ավելին: Եվտուշենկովը Ռուսաստանի ամենահարուստ մարդկանցից է՝միլիարդատեր: Բայց ինչո՞ւ ո՛չ վարչապետի կայքը, ո՛չ նրա ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակը», որը եւս հրապարակել է այս տեղեկությունը, չեն գրում սրա մասին, չէ՞ որ Փաշինյանը շարքային գործարարի չի ընդունել, ինչպես կարելի է հասկանալ իրենց տարածած հաղորդագրությունից, այլ՝ չափազանց հարուստ, հեղինակավոր եւ ազդեցիկ: Կա երկու կարեւոր պատճառ:

Նախ, պաշտոնական հաղորդագրության մեջ չի նշվում, որ Փաշինյանն ընդունել է «ԱՖԿ Սիստեմա» ընկերության սեփականատիրոջը՝ այն պարզ պատճառով, որ հայ հասարակությանն այս ընկերությունը հայտնի է նրանով, որ ընկերության տնօրենների խորհրդի անդամ է եղել եւ գուցե հիմա էլ է՝ ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Ընկերության տնօրենների խորհուրդը, որ վերջին անգամ ընտրվել է 2024-ին, կազմված է 12 անդամից, սակայն տնօրենների խորհրդի անդամների կազմը չի հրապարակվում, այն գաղտնի է: Ռուսական բազմաթիվ ընկերություններ, որոնք ընկել են արեւմտյան պատժամիջոցների տակ գաղտնի են պահում իրենց ղեկավարության կազմը, որպեսզի նրանց հնարավորություն տան խուսափելու այդ պատժամիջոցներից: Փաշինյանը Ռոբերտ Քոչարյանին մեղադրում էր երկիրը թալանելու, միլիարդատեր դառնալու մեջ, ըստ Փաշինյանի՝ Քոչարյանի կարողությունը կազմում է 4 միլիարդ դոլար, այդ կարողությունը նա Հայաստանում չի պահում, այդքան փող պահելու տեղ չկա, ենթադրվում էր, որ նա այդ գումարները ներդրել է «ԱՖԿ սիստեմայում», որի մեջ է մտնում ՄՏՍ-ը, իսկ Վիվա Սելլ-ը դրա դուստր ձեռնարկությունն էր, գուցե՝ նաեւ հիմա էլ, որն էլ նրան այդ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ընտրվելու հնարավորություն է տալիս: Ընկերության տնօրենների խորհուրդն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, հիմնականում՝ խոշոր բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, թեեւ տեսականորեն կարող են ընտրվել նաեւ ընդհանրապես բաժնետեր չհանդիսացող մարդիկ: Եթե Փաշինյանը պաշտոնապես հայտարարի, որ ընդունել է «ԱՖԿ Սիտեմայի» ամենախոշոր սեփականատիրոջը, ապա կստացվի, որ ընդունել է Ռոբերտ Քոչարյանի բիզնես գործընկերոջը եւ պետություն-մասնավոր հատվածի համագործակցություն է քննարկում մի ընկերության սեփականատիրոջ հետ, որտեղ մասնաբաժին ունի նաեւ Ռոբերտ Քոչարյանը: Մի ընկերության սեփականատիրոջ, որտեղ ներդրված են Հայաստանից «թալանված» միլիարդները: Բայց դե, Փաշինյանը, որը «ստերիլ» անձնավորություն է, ողջ կյանքում ձեռքը մի դրամ գողացած փող չի վերցրել, ո՞նց կարող է նման քայլի գնալ:

Երկրորդ պատճառը Վլադիմիր Եվտուշենկովի, այսպես ասած, ծագումն է, որը եւս պաշտոնական հաղորդագրության մեջ նշված չէ, գրված չէ՝ ռուս կամ ռուսաստանցի գործարար: Ինչպե՞ս նման բան գրել, եթե երկրում մոլեգնում է հակառուսականությունը, Փաշինյանին կից արտաքին հետախուզական ծառայությունը Ռուսաստանին եւ Ռուսաստանի գործարարներին մեղադրում է Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ սանձազերծելու մեջ, Եվրամիությունը միլիոններ է տալիս այդ հիբրիդային հարձակումների դեմն առնելու, ՔՊ-ականների դիմադրողականությունը բարձրացնելու համար, իսկ Փաշինյանն այդ նույն ժամանակ ընդունում է ռուսաստանցի գործարարին եւ նրա հետ քննարկում պետություն-մասնավոր, ենթադրվում է՝ Հայաստանի պետություն-«ԱՖԿ Սիստեմա» համագործակցության հարցեր:

Եվ ո՞ւր մնաց եվրոպական համերաշխությունը. Վլադիմիր Եվտուշենկովն իր ընտանիքով՝ տղա, աղջիկ, կին, գերդաստանով՝ բազմաթիվ ազգականներ, արեւմտյան պատժամիջոցների տակ է. «ԱՖԿ Սիստեման» վերահսկում է Kronstadt Group-ը, որը ռուսական զինված ուժերի համար անօդաչու թռչող սարքերի եւ հատուկ կապի համակարգերի արտադրող է, ինչպես նաեւ՝ պաշտպանական արդյունաբերության համար սարքավորումների եւ ծրագրային ապահովման մշակող: Ուկրաինայի իշխանությունները Եվտուշենկովին մեղադրում են Ռուսաստանի կողմից Ուկրաինայից գրավված տարածքներում ունեցած սեփականության մեջ: Եվ ահա՝ Հայաստանը Եվրամիություն տանող, ԵՄ-ի անդամակցությունը Հայաստանի ռազմավարական նպատակ հռչակող անձը կառավարության շենքում պաշտոնական ընդունելության է արժանացնում նման մի անձի: Բայց փաշինյանական ստրկախումբը՝ արեւմտամետ հանրույթը, որեւէ բողոքի ձայն չի բարձրացնում, անգամ ծպտուն չի հանում, որովհետեւ այնտեղ անգամ շնչելն ու արտաշնչելը հրահանգավորվում են վերադասից:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՈՍԿՈՒ ԳՆԻ ՍՐԸՆԹԱՑ ԹԱՆԿԱՑՈՒՄԸ ՈՉ ԹԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԼ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ՈՒՆԻ

ՇՈՒԿԱ

Ոսկու եւ ադամանդի գինը Հայաստանում բարձրանում է ոչ թե օր-օրի, այլ՝ ժամ առ ժամ: Ըստ ոսկերիչների, պատճառն այն է, որ ներկայում հայաստանյան ոսկու շուկան ողողված է միայն թուրքական եւ իտալական ոսկով, իսկ տեղական ոսկին միայն արտահանվում է եւ ներքին շուկայում չի իրացվում: Վերջին թանկացումների հետ կապված՝ մենք զրուցեցինք մի քանի տնտեսվարողի հետ: Նրանք հավաստիացնում են, որ ոսկու գների բարձրացումն իրենց ձեռնտու չէ, քանի որ իրենք գնորդ են կորցնում: «Եթե 1 տարի առաջ օրը մի քանի կտոր ոսկի էր վաճառվում, հիմա՝ մեկ կամ երկու: 1 գրամ ոսկու գինը 33 հազար դրամ է, իտալական ոսկու 1 գրամը 37 հազար դրամ է: Մարդիկ առաջ նախընտրում էին 10 գրամանոց եւ ավելի վզնոցներ, հիմա լավագույն դեպքում մինչեւ 10 գրամ են գնում: Ոսկին թանկ է, մարդկանց ձեռքն էլ գումար չկա: Մենք էլ եթե առեւտուր չանենք, հարկը չենք կարող մուծել, առանց այն էլ հարկերը շատ են թանկացրել»,- մեզ հետ զրույցում ասաց տիկին Գոհարը, որը զբաղվում է ոսկու առքուվաճառքով: Նա հավելում է, որ 20 տարուց ավելի ոսկու է վաճառում, սակայն ոսկու գնի այսպիսի աննախադեպ բարձրացում չի հիշում:

Տնտեսագետ Սուրեն Պարսյանը փաստում է, որ Հայաստանում գործող ոսկու հանքերն ավելի շատ շահույթ են ստանում ոսկու գնի կտրուկ թանկացման արդյունքում. «Կասեմ, որ այդ հանքերի գործերը լավացել են՝ ոսկու գնի թանկացման հետ կապված: Բացի այդ, կառավարությունը պլանավորում է, որ այս տարվա վերջին պետք է սկսի Ամուլսարի ոսկու հանքի արդեն փորձնական շահագործումը: Հիմա մասնագետները գնահատականներ են տալիս, որ այս գների պայմաններում պետական բյուջե անհամեմատ ավելի մեծ գումարներ կմտնեն: Ամուլսարի նախագիծը, որ նախատեսում էր, օրինակ, որ տարեկան 600-700 մլն դոլարի արտահանում ունենա, այս թանկացման պայմաններում կարող է նույնիսկ 1 միլիարդը գերազանցել: Ամուլսարի շահագործումով պետական բյուջեի եկամտային մասը կավելանա՝ այս ոսկու գների պայմաններում, ոսկու գների նվազեցում չի լինի, քանի որ դա շատ մեծ քանակ չէ, որ համաշխարհային շուկան կարողանա զսպել աճը»:

Վերջին 1 տարվա ընթացքում համաշխարհային բորսայում ոսկու գինը նոր ռեկորդ է սահմանել՝ պատմության մեջ առաջին անգամ մեկ ունցիայի դիմաց գերազանցելով 4 հազար դոլարի շեմը: Պատերազմներ, սանկցիաներ, անորոշություններ... ոսկու գնի թանկացումը պայմանավորված է մի քանի գործոնով՝ մեզ հետ զրույցում թվարկում է տնտեսագետը: «Առհասարակ, վերջին 5 ամիսների ընթացքում ոսկու գների կտրուկ աճը պայմանավորված է համաշխարհային շուկայում անորոշության աճով, քանի որ ներկայում քաղաքական եւ տնտեսական առումով կրկին անորոշ վիճակ է: Ներդրողները ցանկանում են իրենց գումարները պահել այնպիսի ակտիվներում, որ քիչ ռիսկային են եւ չեն կարող ընկնել այս կամ այն երկրի պատժամիջոցների տակ: 2022 թվականից սկսած, Ռուսաստանի նկատմամբ կիրառվում են մի շարք պատժամիջոցներ, այդ թվում՝ ռուսական ակտիվների բռնագրավում կամ սառեցում: Դա բացասական ազդակ է, ընդհանուր առմամբ, համաշխարհային ներդրողներին, հատկապես՝ չինական, որ ձեր բերած պարտատոմսերը կարող են ինչ-որ մի փուլում հայտնվել սանկցիաների տակ, հետեւաբար, այդ ներդրողների զգալի մասը նախընտրում է պարտատոմսերը պահել ոսկով եւ ոչ նախկինի պես՝ արեւմտյան արժեթղթերով, եւ սրա արդյունքում կտրուկ ավելացավ ոսկու պահաջարկը համաշխարհային շուկայում: Բացի այդ, այս ամենին գումարվեց վերջին 1 տարվա ընթացքում Թրամփի տնտեսական պատերազմը, որը նա իրականացնում է մաքսատուրքերի բարձրացման միջոցով, որը նույնպես լրացուցիչ ռիսկ է ստեղծել երկրների համար: Երրորդ գործոնը հիմնականում պայմանավորված է Գրենլանդիայի վերահսկման գաղափարով, դարձյալ Թրամփի աշխատակազմն է առաջ քաշում: Սա նույնպես մեծ անորոշություն է ստեղծել արեւմտյան բլոկում, եւ նույնիսկ առանձին երկրներին կոչ են անում ամերիկյան արժեթղթերի մեջ ներդրումներ չկատարել: Ոսկին մշտապես եղել է կրիզիսային՝ ճգնաժամային իրավիճակներում փողերը պահելու լավագույն միջոցներից մեկը՝ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, եւ ներդրումները կտրուկ ավելացնում են ոսկու պահաջարկը: Նաեւ ուշագրավ է, որ ոչ միայն առանձին անհատներն են ավելացնում ոսկու նպատմամբ պահանջարկը, այլ նաեւ՝ երկրները: Օրինակ, եթե մի քանի տարի առաջ երկրներն իրենց պահուստները պահում էին 60%-ը դոլարով, հիմա իջել է 40%-ի, մնացած 20%-ը նրանք սկսել են պահել ոսկով: Երկրներն իրենց պահուստները սկսում են ոսկով պահել, եւ սա բավականին հետաքրքիր տենդենց է, որը եւս մեկ անգամ ցույց է տալիս քաղաքական անորոշությունը, եւ որ պատժամիջոցներն ինչպես կարող են խարխլել համաշխարհային տնտեսությունը, եւ որից տուժում են բոլորը: Մենք դեռ մեկ ունցիայի դիմաց 4 հազար դոլարը չէինք ունեցել, հիմա ոսկու ռեկորդային գինը հասել է 4 հազար 860 դոլարի, որը պատմական ռեկորդ է ոսկու շուկայում»:

Ըստ Պարսյանի՝ այս օրերին ոսկու գնի մի փոքր նվազեցումը պայմանավորված է Իրանի քաղաքական իրավիճակի կայունությամբ, բայց իրավիճակն ավելի սրվեց Գրենլանդիայի հետ կապված եւ դեռ ավելի կսրվի՝ հաշվի առնելով, որ ամերիկյան կողմն արդեն Պարսից ծոց է տանում իր ակտիվները, որը եւս կարող է ազդեցություն թողնել համաշխարհային շուկայի սպասումների վրա, եւ ոսկու գինը կարող է աճել: Ինչ սպասել առաջիկայում՝ ոսկու գնի կրկին թանկացո՞ւմ, թե՞ նվազում՝ հարց ուղղեցինք տնտեսագետին: «Այս պահին կանխատեսումներ անելը շատ դժվար է՝ հաշվի առնելով, որ այս ամենը ոչ թե տնտեսական պրոցեսներ են, այլ՝ քաղաքական»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՉԻՆԱՑԻՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԽՆԴՐԵԼ Է ԻՐԵՆ ՄԵՂՄ ԴԱՏԵԼ, ԴԱՏԱՐԱՆԸ 5,5 ՏԱՐԻ Է ՏՎԵԼ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքացի, 1985թ. ծնված Սուն Յինգջունը, գտնվելով Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում, իր անձնական օգտագործման համար ձեռք է բերել խոշոր չափերով՝ 0,34 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց եւ նպատակ ունենալով նշված թմրամիջոցը մաքսանենգությամբ ԱՄԷ-ից ապօրինի տեղափոխել Հայաստան, մինչեւ ՀՀ ժամանելը թմրամիջոցը փաթեթավորել է պոլիէթիլենային զիպ փականով տոպրակով եւ փայլաթիթեղով, այնուհետեւ այն տեղադրել է իր կապույտ պլաստմասսե ճամպրուկում եւ ճամպրուկը հանձնել է որպես ուղեբեռ:

2025 թ. մարտի 16-ին, ժամը 11:46-ին, Սուն Յինգջունը Դուբայ-Երեւան ավիաչվերթով ժամանել է ՀՀ եւ իր անձնական գործածման համար, առանց իրացնելու նպատակի, ԱՄԷ-ից մաքսանենգությամբ 0,34 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը ՀՀ պետական սահմանի «Զվարթնոց» օդանավակայանի մաքսակետի տարածքով ապօրինի տեղափոխել է ՀՀ իր ուղեբեռում, ինչը հայտնաբերվել է նրա կապույտ պլաստմասսե ուղեբեռի միջից ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ ՕՀ եւ ԷԱՕ-ՏԻՓՎ բաժինների աշխատակիցների կողմից՝ «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորների սպասարկման եւ ժամանման սրահի մաքսային հսկողության գոտում իրականացված մաքսային զննման ժամանակ: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Դատաքննության ընթացքում Սուն Յինգջունն ընդունել է իր մեղավորությունը եւ ցուցմունք տվել այն մասին, որ մինչեւ այժմ ինքն անհամարձակության եւ վախի պատճառով չէր համարձակվում ինքնակամ խոստովանել իր մեղքը, ինչի համար խորապես զղջում է, բանտում անցկացրած ամիսների ընթացքում խորապես գիտակցել է իր սխալները: Նա հայտնել է, որ Չինաստանում աշխատում էր շինարարության ոլորտում, եւ վերջին տարիներին շինարարությունում վաստակած գումարը շատ քիչ էր, իր հայրը վերջերս մահացել է, մայրն առողջական լուրջ խնդիրներ ունի եւ մշտական դեղորայքի կարիք: Իր որդին սովորում է Չանչուն քաղաքի մանկավարժական համալսարանի առաջին կուրսում: Աշխատավարձը չէր բավարարում առօրյա ծախսերին, այդ պատճառով որոշել է մեկնել արտասահման՝ հուսալով, որ կարող է ավելի շատ գումար վաստակել: Քանի որ հոր մահվան ժամանակ աշխատում էր, չի տեսել հոր մահը, որն իր համար մեծ հարված է, չի կարողանում իրեն ներել, ինչի հետեւանքով տառապում էր անքնությամբ, ինքնամփոփությամբ եւ միգրենով: Եվ հոր մահից հետո փորձում էր իրեն անզգայնացնել ալկոհոլով եւ թմրանյութով: Երբ Դուբայում տեսավ, որ ընկերները թմրանյութ են օգտագործում, որոշեց նրանց հետ միասին օգտագործել եւ ընկերոջ միջոցով հեռախոսազանգով գնեց թմրանյութեր: Քանի որ ինքը հաճախ թմրանյութեր չէր օգտագործում, դրա քանակը շատ փոքր էր, ընկերներն անընդհատ պնդում էին, որ թմրանյութ ընդունի, ինչը հանգեցրել է վեճի: Ինքը վախենում էր, որ նրանք իր մասին կհայտնեն Դուբայի ոստիկանությանը, ուստի թմրանյութը բերել է Հայաստան: Սա առաջին անգամն էր, որ իր հետ թմրանյութ է բերել ՀՀ: Ասել է, որ պատրաստ է կրել պատիժը, սակայն խնդրում է կարեկցանքով մոտենալ՝ հաշվի առնելով, որ միայն չինարեն է խոսում եւ քրեակատարողական հիմնարկում չի կարողանում շփվել որեւէ մեկի հետ՝ ամեն օր անկյունում թաքնված է անցկացնում ու երբ իրեն վատ է զգում, միայն կարող է սառը ցնցուղ ընդունել, որպեսզի դիմանա: Դատարանին խնդրել է կարեկցանքով վերաբերվել իրեն եւ մեղմ դատել, քանի որ պետք է գումար վաստակի՝ մորը դեղորայք գնելու, որդու ուսման վարձը եւ կենցաղային ծախսերը հոգալու համար: Արդեն մի քանի ամիս է՝ կապ չունի իր ընտանիքի հետ եւ անհանգստանում է, որ եթե նրանք իմանան իր կալանավորման մասին, չեն ընդունի դա:

2025թ. օգոստոսի 29-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Տաթեւիկ Մուրադյանը վճռել է Սուն Յինգջունի նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 1 մլն 500 հազար ՀՀ դրամի չափով, եւ ազատազրկում՝ 5 տարի 6 ամիս ժամկետով՝ պատժի կրման սկիզբը հաշվելով 2025 թ. մարտի 16-ից, Սուն Յինգջունի նկատմամբ նշանակել լրացուցիչ պատիժ՝ ՀՀ տարածքից վտարելը իր մշտական բնակության երկիր, եւ նրան արգելել գտնվել ՀՀ-ում՝ 10 տարի ժամկետով: Սուն Յինգջունի պաշտպանը վերաքննիչ բողոք է բերել՝ խնդրելով ամբողջությամբ բեկանել առաջին ատյանի քրեական դատարանի 2025թ. օգոստոսի 29-ի դատավճիռը: Հիմա գործը քննվում է Վերաքննիչ քրեական դատարանում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Մահվան արխիվ». ռետրո սերիալ, որն արժե դիտել

Գերմանական արտադրության «Մահվան արխիվ» սերիալը մասնագետները դասում են ռազմադրամատիկ սերիալների ժանրին: Ռեժիսորը եւ սցենարի հեղինակը Ռուդի Կուրցն է: Նկարահանվել է 1980 թվականին՝ Գերմանիայում, այն ժամանակվա՝ ԳԴՀ-ում: Բաղկացած է 13 սերիայից: Սյուժեն մտացածին իրադարձությունների վրա է հիմնված, եւ, ինչպես ասում են, բոլոր համընկնումները պատահականություն են:

Դեպքերը տեղի են ունենում 1944 թվականին, խորհրդային ճակատում, երբ հետախույզները պետք է կարողանան ներթափանցել ֆաշիստների հսկողության տակ գտնվող Լեհաստան ու ձեռք բերել գաղտնի փաստաթղթեր: Այսպես, Դիմադրության շարժման հինգ հետախույզ առաջադրանք են ստանում՝ ներթափանցել օկուպացված Լեհաստան եւ գտնել կարեւոր հետախուզական նշանակության գաղտնի փաստաթղթեր, որոնք հայտնի են «Մահվան արխիվ» ընդհանուր անունով: Խմբում երեքը գերմանացի են, մեկը՝ լեհ եւ մեկը՝ ռուս զինվորական: Նրանց առաջադրանքի կատարումից կախված է բազմաթիվ մարդկանց կյանքը, եւ եթե հաջողությամբ կատարեն առաջադրանքը, նրանք կփրկվեն: Չնայած արդեն պատերազմի վերջը մոտ է, եւ ֆաշիստական Գերմանիայում զգում են, որ իրենց պարտությունը «հեռու սարերի հետեւում չէ», սակայն դաժան մարտերը շարունակում են ընթանալ, ու հաղթանակին հասնելու համար բոլոր ճակատներում դեռ երկար ճանապարհ կա անցնելու՝ թե՛ ռազմական, թե՛ անտեսանելի՝ հետախուզական: Հնգյակի օպերացիան սկսվում է լեհական սահմանի վրա դեսանտային իջեցումով: Հենց սկզբից էլ օպերացիայում ինչ-որ բան այնպես չի ընթանում: Հնգյակից մեկը վիրավորվում է, եւ ողջ խումբը ստիպված է լինում բաժանվել երկու մասի՝ չբացահայտվելու համար:

Հետաքրքիր այս ռետրո սերիալը ուշագրավ է նրանով, որ նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմին, սակայն իր ուշադրության կենտրոնում ոչ թե ռազմաճակատն է, այլ՝ հետախուզությունը՝ հակառակորդի բյուրոկրատական ռեսուրսի քայքայումը: Այն ցույց է տալիս, որ զանգվածային բռնությունները հնարավոր են ոչ միայն զուտ ֆանատիկ գաղափարախոսությունների ազդեցությամբ, այլ նաեւ շատ լավ մտածված ու ստեղծված փաստաթղթային բազաների ու համակարգերի, հրամանների ու քարտարանների շնորհիվ, որոնք պետք է վերացնել՝ թշնամու «ձեռքերը կտրելու համար»:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո՞Վ Է «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ»Ի ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆ՝ ԿԱՌԼԵՆ ՄԻՆԱՍՅԱՆԸ, ԹԵ՞ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Սակայն դրանցից շատերի իրականացման ժամկետները խախտվել են, կառավարությունն էլ ձգձգման տարբեր պատճառաբանություններ է ներկայացնում: Ինչպես ասում են՝ արտը՝ խախուտ, մահանեն՝ կարկուտ:

Իջեւանը Բերդի տարածաշրջանին կապող Իծաքար-Գանձաքար ավտոճանապարհը ռազմավարական նշանակություն ունի, քանզի այն, ի տարբերություն Իջեւան-Վազաշեն-Պառավաքար-Բերդ ավտոճանապարհի, չի անցնում Ադրբեջանի հետ սահմանի եզրով: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին հունվարի 13-ին հարցում էի արել. «Ճիշտ է սկսվել Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհի կառուցապատումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում, ո՞վ է աշխատանքների պատվիրատուն, որքա՞ն գումար է նախատեսված ծրագրով, ի սկզբանե ճի՞շտ էր նախատեսված ծրագրի ավարտը, ճի՞շտ կավարտվի»: Հունվարի 20-ին ստացել եմ նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի ստորագրությամբ պատասխան. «Տեղեկացնում ենք, որ Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2022 թ., սակայն որակական եւ ժամկետային պահանջների հետ կապված խնդիրների պատճառով 2023 թվականին կապալառուի հետ կնքված պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է: 2024 թվականին իրականացվել է նոր գնման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Էկո Բիլդինգ» ՍՊ ընկերությունը: Աշխատանքների ավարտը նախատեսված էր 2025 թվականի սեպտեմբերին, սակայն կապալառուն չի կարողացել ժամկետում կատարել պարտավորությունները, ինչի պատճառով աշխատանքների կատարման նոր ժամկետ է սահմանվել 2026-ի մարտ ամիսը: Պարտավորությունների չկատարման համար սահմանված կարգով կապալառուից կգանձվեն տույժեր: Մինչ օրս կատարված եւ ընդունված աշխատանքների արժեքը՝ 2,7 մլրդ դրամ, իսկ 2026թ. իրականացվելիք աշխատանքների արժեքը՝ 0,3 մլրդ դրամ: Կապալառու՝ «Էկո Բիլդինգ» ՍՊԸ, պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ»:

Նախարար Խուդաթյանին նաեւ հարցրել եմ. «Ճիշտ է սկսվել Վերին Կարմիրաղբյուր-Չինարի ավտոճանապարհի կառուցապատումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում, ո՞վ է աշխատանքների պատվիրատուն, որքա՞ն գումար է նախատեսված ծրագրով, ի սկզբանե ճի՞շտ էր նախատեսված ծրագրի ավարտը, ճի՞շտ այն կավարտվի»: Փոխնախարար Ղալեչյանի պատասխանում գրված է. «Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ2+700-կմ9+700 եւ կմ14+160-կմ16+400 հատվածների հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի ապրիլին: Ավարտը նախատեսվում էր նույն տարվա սեպտեմբերին: Տեղում, տեղանքի իրադրությամբ պայմանավորված, ի հայտ եկած խնդիրներին նախագծային նոր լուծումներ տալու եւ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն է առաջացել, որի պատճառով աշխատանքների ավարտը տեղափոխվել է 2026 թվականի ամռան սկիզբ: Մինչ օրս կատարված եւ ընդունված աշխատանքների արժեքը՝ 1 198 428 524 դրամ: 2026-ին իրականացվելիք աշխատանքների արժեքը՝ 433 571 426 դրամ: Կապալառու՝ «Էկո Բիլդինգ» ՍՊԸ եւ «ԷՄ Քոնսթրաքշն» ՍՊ կոնսորցիում: Պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ»:

«Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ն խախտել է Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+600-կմ 42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ժամկետային պարտավորությունները, սակայն դրա համար տույժերի ենթարկելու փոխարեն, այդ կազմակերպությանն է տրվել Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների պատվերը: ՏԿԵ նախարարության պատասխանում որպես Բերդ-Արծվաբերդ-Չինարի ճանապարհի հատվածների հիմնանորոգման ժամկետների խախտման պատճառ նշված են տեղանքում ի հայտ եկած խնդիրները: «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ն շինարարական տեխնիկայի եւ աշխատուժի ինչքա՞ն մեծ ռեսուրսներ ունի, որ միաժամանակ 2 մեծ ծրագիր իրականացնի: Սակայն միաժամանակ 2 ծրագիր է իրականացնում, երկուսի ժամկետներն էլ խախտվել են: «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ն վայքեցի Կառլեն Մինասյանինն է, այս կազմակերպությունը կառավարությունից խոշոր տենդերներ է շահում: Կառլեն Մինասյանը «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի մերձավորն է՝ նախկին թիմակիցը: Նա կուսակցության ցուցակով Վայքի համայնքապետի թեկնածու է եղել: Շատերը կասկածում են, որ «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի իրական շահառուն ոչ թե Կառլեն Մինասյանն է, այլ՝ Արամ Սարգսյանը, եւ դրանով է պայմանավորված, որ կառավարությունն այդ կազմակերպության նկատմամբ այսքան բարեհաճ վերաբերմունք ունի:

Նիկոլ Փաշինյանի իշխանության ձեռքբերումների առաջին հորիզոնականում ճանապարհաշինական ծրագրերն են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՈՒԺՎԵԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՍՊԱՍԵԼ

2026 թվականի հունվարի 1-ից Հայաստանում գործում է առողջության համընդհանուր ապահովագրությունը: Ինչպես հայտնի է, առաջնային կարգով դրանից օգտվելու են պետության կողմից ապահովագրվողները՝ մինչեւ 18 տարեկանները, 65 պլյուս տարիքի անձինք եւ 18-65 տարեկան հաշմանդամության խումբ եւ սոցիալական անապահովության 28 բալից ավելի ունեցողները: Ինչպես նաեւ՝ 200 հազար դրամից բարձր աշխատավարձ ստացող անձինք, որոնք հենց այս տարվանից ապահովագրության վճար են մուծելու: Իսկ ապահովագրության փաթեթը ներառելու է կանխարգելիչ, վաղ հայտնաբերմանն ուղղված սքրինինգային ծրագրեր, հիվանդանոցային ծրագրեր, դեղորայքային ապահովում, շտապօգնության ծառայություններ եւ այլն: Ամեն ամիս ապահովագրական վճարը պահվելու է նախորդ ամսվա աշխատավարձից: Հունվարի համար շահառուներն արդեն սկսել են վճարել:

Հիշեցնենք. 10 հազար 800 դրամ ամսական վճարից 6 հազարը սուբսիդավորելու է պետությունը: Նախաձեռնությունն անհրաժեշտ է եւ նույնիսկ ուշացած, պետք է ամեն ինչ անել՝ դրա իրագործմանն աջակցելու համար. այս կարծիքին է «Առողջության իրավունք» իրավապաշտպան ՀԿ հիմնադիր Ծաղիկ Վարդանյանը, որը սովորաբար անխնա քննադատում է նախարար Ավանեսյանի գործունեությունը: Սակայն նա շեշտում է, որ հունվարից օրենքը կարող է գործել միայն մասամբ: «Օրենքն ունի միջանկյալ դրույթներ, որոնք ասում են, որ մինչեւ 6 ամիս ենթաօրենսդրական դաշտի ձեւավորման պրոցես է լինելու: Ըստ էության՝ այս վեց ամիսը ներդրման փուլն է, չնայած դա չեն հայտարարում: Մոտ 12 կառավարության որոշումներ կան, որոնք ընդունվել ու հաստատվել են դեկտեմբերի վերջին ու ուժի մեջ են մտել հունվարից: Բայց միայն հաստատելը չէ, դրանք պետք է գնան հասնեն մինչեւ ավագ, միջին անձնակազմին, մոտ 28-30 հազար բուժաշխատողների, որ նրանք հասկանան, թե ինչ է արվելու, ինչն է փոխվելու, «Արմեդում» ոնց են լրացնելու եւ այլն», - ասում է Ծաղիկ Վարդանյանը: Նա կապի մեջ է պոլիկլինիկաների հետ, դժգոհություններ այս պահին չկան, դեռ այդ փուլին չեն հասել, բայց ապահովագրությամբ բժշկական ծառայություն ստանալու համար դիմողներին բուժհաստատություններին աշխատողները հաճախ են առաջարկում սպասել, քանի որ կան իրենց համար անհասկանալի պահեր: «Քանի որ ընդհանուր վճարները պակասելու են, այս փուլում դիմողները, եթե դեպքը շտապ չէ, հիմնականում համաձայն են սպասել»:

Հիմա մարդը եթե գնա պոլիկլինիկա, նրան մատուցելո՞ւ են այդ ծառայությունները, թե՞ դեռ չեն կարող: «Այն ծառայությունները, որոնք 2025 թվականին պետպատվերով տվյալ բուժհաստատությունն իրականացնելու էր, դրանք մատուցվելու են, բայց նրանք, որոնք պետք է ավելացվեն՝ հետազոտությունները եւ այլն, դեռ ոչ: Կարելի է ասել, որ այս փուլում ապահովագրական գործունեությունն իրականացվում է միայն պետպատվերի ծավալով, այլ բան այս փուլում հնարավոր չէ: Համավճարը, օրինակ, պետք է հաստատի հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, որը նոր է ստեղծվում: Տարբերությունը պետպատվերի ծրագրից՝ շահառուների մեծ թվերն են. բարձր տարիքի շահառուները, որոնք ներառված չէին արտոնյալ խմբերում, հիմա ներառված են, երրորդ խմբի հաշմանդամները եւ այլն», - պատասխանում է փորձագետը:

Նրա կարծիքով, ավելի ճիշտ կլիներ նախ փոքր ծավալով պիլոտային ծրագիր անել, բայց ընտրվել է ավելի մասսայական ձեւաչափ, եւ մինչեւ հունիս դեռ բազմաթիվ շտկումներ են սպասվում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ԱՌԱՁՆԱՑՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄՏԱՎ ՆՈՐ ՓՈՒԼ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Սեւ, մթին ամպեր են կուտակվել «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի» անխորտակ Լեռան ոչ թե ստորոտին, որ չնչին վնասներ պատճառելով՝ արագորեն ցրվում էին (հավատավոր ժողովրդի միացյալ կամքով), այլ՝ լանջերին: Դեռ սիգապանծ գագաթը զերծ է աղետաբեր ամպերից, բայց այլեւս տեսանելի է, որ միտումը հենց գագաթին հասնելն է...

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ իշխանությունների ծրագրած ու իմպուլսիվ վարվող պատերազմը, որ օր-օրի նոր ուժգնությամբ ու սպառնալի շրջադարձերով է շարունակվում, մտել է սպասելի՝ վտանգներով ու սպառնալիքներով առլեցուն փուլ: Ասպատակողների խառնամբոխը, ամիսներ շարունակ պաշարելով «անառիկ լեռը», կործանիչ քիչ հարվածներ չի հասցրել Սրբության-Սրբոցին, տեղ-տեղ պատերի մեջ հաջողել է «անցքեր» բացել, իր շուրջը մի փոքրիկ խումբ տիրադավներ համախմբել եւ անդուլ համառությամբ սեղմել օղակը:

Զարմանում ես հրոսակախմբի առաջնորդի անօրինակ եռանդի, նպատակամղվածության, զարհուրելի կուրության վրա: Ո՞ւր էր, թե նա իր այդ կարողություններն ու դիվային եռանդը նվիրաբերեր երկրի պաշտպանունակության բարձրացմանը, տնտեսության ամրապնդմանն ու զարգացմանը, ընդունված օրենքների խոնարհ կիրառմամբ կառավարելուն: Գոնե կարդար ու հնազանդ կատարեր Սահմանադրության 17-րդ հոդվածի պահանջները, որ սեւով սպիտակի վրա հստակ գրված է. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից»:

Արդյո՞ք նա գիտակցում է, որ այս դրույթը ոչ թե հռչակագրային է, այլ պարտադիր կատարման ենթակա, որը բացառում է պետության որեւէ միջամտություն Եկեղեցու ներքին կյանքին: Կարծում եք՝ նա չգիտի՞, որ Եկեղեցին անջատված է պետությունից, եւ պետությունն իրավունք չունի խառնվելու Եկեղեցու ու կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը եւ ներքին կյանքին: Բայց դիվա-ճիվաղային (ուրիշ ինչպե՞ս անվանես) մտասեւեռմամբ՝ իրեն թույլ է տալիս հերթական ապօրինությունն անել՝ ֆեյսբուքյան ուղիղ եթերում հայտարարելով. «Վաղը Մասիս քաղաքի Սուրբ Թադեոս եկեղեցում Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի հետ կմասնակցեմ սուրբ եւ անմահ պատարագի»:

Պարզ է, փորձում է հակազդող քայլեր ձեռնարկել կաթողիկոսի որոշման դեմ: Իսկ որոշումը հայտնի է ու արդար՝ Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանն ազատվել է թեմակալ առաջնորդի պաշտոնից՝ «առաջնորդի հանգամանքը չարաշահելու, պարտականությունների մեջ թերանալու, թեմի եկեղեցականաց նկատմամբ հարկադրանք ու ճնշումներ գործադրելու պատճառներով»: Հայրապետական տնօրինությամբ՝ Մասյացոտնի թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվել Հոգեշնորհ Տ. Ռուբեն վարդապետ Զարգարյանը: Բայց դա «ձեռք» չի տալիս նրան, «ով իրեն պարտված չի ճանաչում երբեք»:

Լուրն առնելուց ակնթարթներ անց Փաշինյանը հրապարակային հայտարարությամբ այդ որոշումը «չեղարկեց»՝ ինքնակամ «որոշելով», որ հայրապետական տնօրինությունն ուժ չունի, իսկ պաշտոնանկ եղած հոգեւորականը շարունակում է լինել թեմի առաջնորդ: Նույն տրամաբանությամբ կարող էր որոշել, որ ձուկը չլողա ջրում, իսկ երկնքի լազուրը կապույտ չլինի, քանի որ ինքն է ուզում այդպես: Երեւույթն այնքան է ողբերգական, որ մարդիկ չկարողացան չերգիծել. «Նիկոլի հայտարարությունը նման է այն բանին, ոնց որ կաթողիկոսը հայտարարի՝ Նիկոլ Փաշինյանը վարչապետ չէ, ուստի ում աշխատանքից հեռացրել է իր հրամանով, շարունակում են պաշտոնավարել»:

Իրատես մարդիկ անմիջապես հասկացան, որ սա արդեն քաղաքական հայտարարություն չէ, սա պետական լիազորությունների բացահայտ արհամարհում է, իշխանության բռնազավթում՝ ուղղված Եկեղեցու դեմ: Տեսնո՞ւմ եք՝ Փաշինյանը նման քաոսով գնում է «վաբանկ», իր քարոզարշավին ընդառաջ... Նա տեսնում է՝ ողջ աշխարհը հայտնվել է այսուայնտեղ բռնկվող պատերազմների թոհուբոհում, մանրումեծ բռնապետների անամոթ հայտարարությունները՝ «Իրավունք ունենք ուժով պարտադրելու մեր իրավունքները», տարածվում են, եւ այլեւս չեն գործում միջազգային օրենքները, անհետացել է հումանիզմ, բարոյականություն, խղճմտանք... Նիկոլ Փաշինյանն էլ մտածում է երեւի՝ «եթե արտաքին աշխարհում չեն գործում բարոյական օրենքները, ինչո՞ւ պիտի գործեն երկրների ներքին կյանքում»:

Կասկած չկա, որ իշխանության իրական մոտիվը եկեղեցու «բառենորոգումը» չէ, այլ եկեղեցու՝ որպես կառուցվածքային հակակշռի կազմաքանդումը: Ոչ թե հավատքի մաքրումը, այլ՝ հեղինակության արժեզրկումը: Ոչ թե բարոյական առողջացումը, այլ՝ սեփական վերահսկողության հաստատումը: Պառակտված եկեղեցին այլեւս չի կարող լինել հասարակության հավաքական բարոյական հենասյուն: Այս ամենը խորությամբ գիտակցելուց հետո մարդու սիրտն այլեւս չի ցավում, այն ուղղակի պայթում է՝ տեսնելով, թե ինչպես է միահեծան կամքով, սեփական խեղկատակ իրականության մեջ թաղվելով, ղեկավարում երկիրը, որտեղ սերունդներն իրենց կյանքն են դրել՝ պահպանելու արժեքները, որոնք նա հիմա պատկերացնում է որպես «ֆեյսբուքյան կոճակների» շոյանք:

Եկեղեցին, իր դարավոր սկզբունքներով, չի երկնչում. այն կանգնած է ինչպես լեռը, մինչդեռ նրանք՝ ՔՊ-ական ոհմակի շնագայլերը, «շատ ինքնավստահ», մտածում են, թե կարող են հոսանքին հակառակ լողալ՝ առանց թրջվելու: Բայց ժողովուրդը միշտ ապացուցել է, որ հասարակության հոսանքը ոչ մի իշխանություն չի կարող շրջել: Պատմությունը հեգնանքով ու ողբերգությամբ լի է: Մի բան հաստատ է՝ ով խաղում է կրակի հետ, վերջում ծիծաղի եւ ողբերգության առարկա է դառնում, մինչդեռ երկիրը՝ իր ժողովրդով, շարունակում է կանգուն մնալ:

Ամփոփելով՝ Հայոց եկեղեցին ամուր լեռ է, հավատարիմ իր սկզբունքներին, իսկ «վարչապետները» դեռ թող փորձեն ինքնահաճ լողալ՝ անտեսելով հոսանքները... Միայն թող իմանան՝ ժողովուրդը հոսանքին դիմադրելու հմտություն ունի, եւ այն միշտ ավելի ուժեղ է, քան նա, ով կարծում է, թե կարող է լողալ հոսանքին հակառակ՝ առանց ջուր կուլ տալու:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 23.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ 2026-ԻՆ. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Է STRATFOR-Ը

Stratfor
Your World. In Context.

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամերիկյան հեղինակավոր Stratfor վերլուծական կենտրոնը, որին նաեւ անվանում են «ստվերային Կենտրոնական հետախուզական վարչություն», օրերս հրապարակել է իր ամենամյա կանխատեսումները 2026 թվականի վերաբերյալ: Այն վերաբերում է գլոբալ աշխարհաքաղաքական իրավիճակին, բայց կա նաեւ հիշատակություն Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ:

Համաձայն զեկույցի՝ Հայաստանն ու Ադրբեջանը համեստ քայլեր կձեռնարկեն՝ անցյալ տարի խաղաղության հաստատման վերաբերյալ ձեռք բերած պայմանավորվածությունները կատարելու ուղղությամբ: Դրանով իսկ նրանք կնվազեցնեն եւս մեկ պատերազմի հավանականությունը: Ամենայն հավանականությամբ, թե՛ Հայաստանը եւ թե՛ Ադրբեջանը զգուշորեն կշարունակեն առեւտրային հարաբերությունները եւ կփորձեն ձեւավորել վստահության մթնոլորտ, սակայն՝ միայն չափավոր առեւտրային համագործակցությամբ եւ ոչ թե համապարփակ տնտեսական ինտեգրացիայի ճանապարհով: Հայաստանի ներքին կյանքում, ըստ Stratfor-ի, վարչապետ Նիկոլ Փաշինյանը կշարունակի բախվել աճող ներքին հանրային դժգոհություններին, որոնք կապված են, ենթադրաբար, Ադրբեջանին կատարվող զիջումների եւ Հայ առաքելական եկեղեցու հետ ունեցած հարաբերությունների լարվածության հետ: Հայաստանի Սահմանադրության փոփոխությունը, որը պահանջում է Ադրբեջանը՝ որպես նախապայման խաղաղության համաձայնագրի վերջնական ստորագրման համար, նույնպես կշարունակի առաջացնել Հայաստանի ներսում հանրային լուրջ դժգոհություն: Դրա համար Փաշինյանը, ամենայն հավանականությամբ, կփորձի հանրաքվեն հետաձգել խորհրդարանական ընտրություններից հետո, որը տեղի է ունենալու հունիսին:

Եթե Փաշինյանը չվերընտրվի, ապա խաղաղության համաձայնագրի ճակատագիրը կդառնա ավելի անորոշ: Եթե հաջողվի պահպանել իշխանությունը, ապա TRIPP-ի իրականացումը կդառնա նրա գլխավոր առաջնահերթությունը, որպեսզի ստանա շոշափելի արդյունքներ այդ համաձայնագրից եւ ցույց տա դրանք: Stratfor-ի գնահատմամբ, Բաքուն կավարտի Արաքսի միջանցքի իր հատվածի շինարարությունը, որն անցնելու է TRIPP-ին զուգահեռ՝ Իրանի տարածքով, իսկ TRIPP-ը Բաքվի համար հետագայում կդառնա որպես այլընտրանք եւ ճնշման միջոց, որով նա կփորձի Հայաստանին դուրս թողնել ռեգիոնալ ինտեգրացիայից, եթե Երեւանը համագործակցության եւ զիջումների չգնա: Ռուսաստանը կփորձի մարտահրավեր նետել TRIPP-ին, սակայն ռեգիոնում նրա դիրքերի թուլացածությունը կսահմանափակի Մոսկվայի հնարավորությունները՝ թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի շրջադարձը դեպի Արեւմուտք կանխելու համար:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am